
ԱՌԱՔՕՏ ԼՈՒՍՈՅ



ԱՌԱՖՕՏ ԼՈՒՍՈՅ

Տ. Տ. ՆԵՐՍԷՍԻ ՀՆՈՐՀԱԼԻ

ՎԱՀԷ ՍՎԱՃԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ
ՄԻԳ
- 2023 -

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivaciyan

sivaciyan@sympatico.ca

**Ազատ զգացեք ձեր շրջանակին ղրկել, բազմացնել,
տպել ու բաժնել ձրիաբար:**

**Գրութիւնը որեւէ փոփոխութեան ենթարկել կամ՝
սպազարուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիւրուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

15 – 2200 Markham Rd. Scarborough ON M1B2W4
Tel : 416-292-9394

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9 AM – 5 PM



ՀՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս նաեւ երախտագիտութեան զգացումները
կը յայտնեմ այս աշխատանքի պատրաստութեան
ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով
եւ թելադրութիւններով գործս դիւրացնող
կարգ մը բարեկամներու:

Աղօթարար եմ, որ Աստուած իրենց պարգեւէ
աւուղջութիւն եւ արեւշատութիւն:

*

Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ բոլոր անոնց,
որոնք գիրքիս մէջ գործածուած լուսանկարները
հայթայթած են:

Աղօթարար եմ, որ Աստուծոյ օրհնութիւնները
անոնց վրայէն անպակաս ըլլայ:



ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լոյս 'ի Լուսոյ (Ա)	2013
Լոյս 'ի Լուսոյ «Բ» - Զարթօնք	2015
Լոյս 'ի Լուսոյ «Գ» -	
Տիեզերական Օրէնքները	2017
Խոկում	2017
Աւետարանի խորհուրդները - Հատոր Ա.	
Յիսուսի կեանքէն դրուագներ	2018
Աւետարանի խորհուրդները - Հատոր Բ.	
Յիսուսի առականները	2018
Աւետարանի խորհուրդները - Հատոր Գ.	
Յիսուս Քրիստոսի խօսքերը	2020
Աւետարանի խորհուրդները - Հատոր Դ.	
Յովհաննու և Թովմասի Աւետարանները	2020
Խորհրդածութիւններ	2019
«ԵՍ ԵՄ» - Ճանչնալ Աստուած	2022
Առաւօտ Լուսոյ	2023

ՈՏԱՆԱԲՈՐՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԾՈՅ

Կենցաղալոյս	2014
Կենցաղալոյս (Ա, Բ, Գ)	2019

Հեղինակին բոլոր հրատարակութիւնները
մատչելի են համացանցային դրութեամբ:
Զանոնք ներբերման հասցէ.

<http://www.luysilusoc.ca>

Հեղինակին ե-փոստի հասցէն.

sivacian@sympatico.ca

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
նաեւ եկեղեցական ժամերգութիւններէ
մէջբերումները առնուած են
հետեւեալ աղբիւրներէ.

ՄԱՏՈՒՎԾԱՇՈՒՆԷՆՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ ԸՍՏ

**ՃՇԿԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՄՆԵԱՅ ՄԵՐՈՅ Դ ԶԵՎԵԱԿԱՆ
ՀԱՄԱՏՐՄԱԳՈՅՆ ԲԱԳՐԷ Դ ՀԱՅԿԱՄԱ ԲԱՐԲԱՌ
1805 Դ ՎԵՆԵՏԻԿ. ՈՄԾԴԻ
Դ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԵՐՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ**



ՀԱՄԱՅԱՆՅԱՅԻՆ ՄԱՏՈՒՎԾԱՇՈՒՆԷՆՉ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԱՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ



**ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆԷ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆԷ
ՇԱՐԱԿԱՆԷ
ԱՂՕԹԷ
ՏԱՂԷ
ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱԼԱԿԱՇԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ
1929**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Էջ
 3- Շնորհակալություն
 4- Հեղինակին Հրատարակությունները
 5- Ծանոթություն
 6- Բովանդակություն
 7- Կենսագրական
 8- Ծնողացս
 9- Ձօն Այտային
- 11- - Յառաջաբան
- 15- Ա - Գիշերային ժամերգությունեն երգ
 - Յիշեսցուք 'ի գիշերի
- 33- Բ - Գիշերային ժամերգությունեն երգ
 - Առաւօտ Լուսոյ
- 73- Գ - Առաւօտեան ժամերգությունեն երգ
 - Սիօնի Որդիք
- 79- Դ - Արեւագալի ժամերգությունեն երգ
 - Լոյս, 'ի Լուսոյ
- 91- - Վերջաբան
- 101- - Յաւերուածական
 -Աստուծոյ եօթ ոգիները



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ


Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղւոյն Արամեան-Ունճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ժօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ընտանեօք գաղթած են Թորոնթօ-Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**ին վկայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի



Համալսարանէն: Ապա հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ժօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ հրատարակած է՝ արդիւնք իր Հետազօտութիւններուն եւ **2007**ին ալ դասադիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:

Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թադաւոր Եկեղեցւոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ: Ուրար կրելու իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնդ Գաղերինսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցւոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մըն ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննախնդիր բնութիւնը զինք մղած է Հետազօտութեան՝ ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



ՍԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
ԺԻՐԱՅԻՐ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ



«Դուք աղերս եղեք, ուրիշ Ձեր շահագետներ իբր ապրուի ունեւեր
դուքս աւազանութեան:

Աղերսաւորն աւազանն ձեռքովն իր թրեւսն ԿԵ ՏԵՍԵՒ ԵՒ ԱՂԵՂԵ
ՁՈՐԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ ԿԵ ԴՈՐԵ, ՈՐՊԵՍԻՒ ԻՐ ԱՏԵՍ ԱՐԵՎ ԵՒ ՀԵՄՈՒՆ
ԵՐԹԱՅ:

Աղերսաւորն Ձեռքովն՝ Ձեր ԴՈՐԵՒՈՒՄ ՈՐԱՆՈՒԹԵԱՐ ԵՂԱՒ
ՈՐԵԱՆ ՈՐ ԱՆ ԱՎԵՐՈՐ ԱՏԵՍ ԿԵ ՍԻՐԵ, ԱՆՅԵՐԱՆ ԱՂ ՀԱՏԱՏ ԱՂԵՂԵ:»

(յարատուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գրքէն)




1955-2010



**Սոյն աշխատութիւնը կը շօնեմ
վաղամեռիկ կողմփօխ՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-ի
անթառնա ՅԻՇԱՏԱԿԻՆ:**





ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

1102-1173

Կաթողիկոս 1166-1173

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Նախորդ գիրքերէս «Աւետարանի Խորհուրդները Գ. - Յիսուսի Խօսքերը»-ի յառաջաբանին մէջ ներկայացուած էր Գիշերային Ժամերգութեան «Առաւօտ Լուսոյ» երգին առաջին վեց տուններուն մեկնաբանութիւնները եւ նաեւ գրուած էր թէ մնացեալ երեսուն տուններն ալ նմանապէս հրապուրիչ եւ գրաւիչ ըլլալով, նիւթ կրնար ըլլալ զատ գիրքի մը: Ահա այդ գիրքը:

Ստեղծագործութեան նպատակը Աստուածայայտնութիւնն է, իսկ մարդուն նպատակն ալ իր կեանքի ընթացքին իր մէջ Աստուածայայտնութիւնը իրականացնելն է: Ահա աս էր, որ մեր անցեալի մեծերը հասկցած, սորված եւ սորվեցուցած էին: Ինչո՞ւ մեր անցեալի մեծերէն Ներսէս Շնորհալին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Տաթեւացին եւ շատ մը ուրիշներ սուրբ կը կոչենք: Իրենք այն ինչ որ սորվեցան՝ հասկցան, մեզի փոխանցեցին մեր Աստուածատուր եկեղեցւոյ միջոցաւ: Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, բաղդատմամբ միւս բոլոր եկեղեցիներուն՝ յարանուանութիւններուն, անգուգական է, որովհետեւ անոր բոլոր ժամերգութիւնները Աստուածապաշտութիւն եւ Աստուած փառաբանութիւն ըլլալէ զատ նաեւ կը ներկայացնեն մարդուն կեանքը եւ եթէ հասկնալով հետեւինք արարողութիւններուն, անոնք մեզի կը սորվեցնեն մեր կեանքի նպատակը, կատարելութեան ուղին եւ մեր կերտելիք պատշաճ բնոյթը եւ կենցաղը: «Լոյս 'Ի Լուսոյ» (Ա) գիրքիս «Լոյս 'Ի Լուսոյ» խորագրեալ Ա. գլխուն մէջ (էջեր 41-44) մեր եկեղեցւոյ ժամերգութիւններուն նկատմամբ աւելի ընդարձակ տեղեկութիւն տրուած էր: Հոս միայն կարճ ամփոփում մը պիտի ներկայացուի:

Հայաստանեայց Եկեղեցին ունի եօթ ժամերգու-

Թիւններ: Ժամերգութիւններուն նպատակը լաւագոյնս հասկնալու համար պատշաճ է նաեւ ըսել թէ մեր եկեղեցւոյ համար օրը կը սկսի երեկոյան՝ արեւամուտին, եւ կ'աւարտի Ս. Պատարգի վերջաւորութեան: Առաջին ժամերգութիւնը «Երեկոյեան»-ն է: Ան կը ներկայացնէ մարդուն անկումը եւ «մուտքը» խաւարամտութեան մէջ: Խաւարամտութիւնը արդիւնքն է ցած գիտակցութեան մակարդակի, որով անհատը ճշմարտութիւնը չի կրնար «տեսնել»՝ հասկնալ եւ կը կարծէ թէ պատրանքը ճշմարտութիւն մըն է: Աս ծագում կ'առնէ սխալ հասկացողութենէ մը, որով ինք կը կարծէ, թէ ինք իր «Ես»-ն է, քան թէ Քրիստոսի մէկ արտայայտութիւնը: Երեկոյեան ժամերգութեան կը յաջորդէ գիշերուայ մթութիւնը, որ փոխաբերաբար կը ներկայացնէ մարդուն խաւարամտութիւնը: Խաւարամտութեան հետեւանք մարդ շատ մը «մեղք»-եր կը գործէ եւ անոնց հակազդեցութիւններուն կ'ենթարկուի եւ իր անդորրութիւնը, հանգիստը եւ խաղաղութիւնը կը կորսնցնէ: Այս ուղղութեամբ ալ արեւամուտէն ետք կը կատարուին «Խաղաղական» եւ «Հանգստեան» ժամերգութիւնները, որոնք մարդուն կողմէ աղերսանքներ են առ Աստուած որպէսզի Աստուծոյ ողորմութեամբ մարդն ալ իր հանգիստը եւ խաղաղութիւնը գտնէ: Բայց պէտք է մոռնալ թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են: Այդ մեղքերը Աստուծոյ դրած Ս. Հոգիի զօրութիւնը կառավարող տիեզերական օրէնքներուն դէմ գործուած արարքներն են: Յաջորդը «Գիշերային» ժամերգութիւնն է, որ պէտք է կատարուի արեւածագէն առաջ: Ան կը ներկայացնէ մարդուն անդրադարձը իր խաւարամտութեան եւ ձգտումը Աստուծոյ շնորհած արնթնութեան՝ բարձր գիտակցութեան: Այս հանգըրւանին անհատը աւելի լաւ հասկացողութեան տէր կ'ըլլայ նկատմամբ իր կեանքի նպատակին եւ կատա-

ընելութեան ուղիին: «Առաւօտեան» ժամերգութիւնը կը ներկայացնէ այդ հասկացողութիւնը եւ այդ հասկացողութեան համար ալ անհատին Աստուած փառաբանութիւնը: Այն անձը որ իր կենցաղը փոխած է եւ ընտրած է կատարելութեան ուղին, ժամանակը եկած է որ ինք ձգտի եւ ջանք չխնայէ մինչեւ որ յաջողի եւ արժանանայ Քրիստոսի իր մէջ յայտնութեան: «Արեւազալի» ժամերգութիւնը կը ներկայացնէ այդ ձգտումը: «Ճաշու» ժամերգութիւնը, որ երեք մասերէ կը բաղկանայ, կը կատարուի այն օրերուն երբ Ս. Պատարագ չի մատուցուիր, ինչպէս Ուրբաթ օրերը: Իսկ «Արեւազալի» ժամերգութեան կը յաջորդէ «Ս. Պատարագը»: Մարդուն համար կարելի չէ առանց իր «Ես»-էն լրիւ ձերբազատման Քրիստոսի իր մէջ յայտնութեանը արժանանալ: Խորանը զոհի սեղանն է եւ զոհն ալ մարդուն «Ես»-ը պէտք է ըլլայ: Միայն այն ատեն է, որ անհատը կը կարողանայ Քրիստոսի հետ հաղորդուիլ՝ Անոր մէջ լուծուիլ: Պատարագի լրիւ բացատրութեան համար տես նաեւ «Լոյս 'ի Լուսոյ» (Ա) գիրքիս «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Սուրբ Պատարագի Մեկնաբանութիւն» խորագրեալ ԺԴ. գլուխը (էջեր 407-434):

Այս գիրքին մէջ պիտի ներկայացուին եւ ուսումնասիրուին Ներսէս Շնորհալիի յօրինած եւ ներկայացուցած չորս երգերը, որոնք մաս կը կազմեն մեր ժամերգութիւններուն եւ եթէ հասկնանք անոնց իմաստները մեզի կը սորվեցնեն այն ինչ որ անհրաժեշտ է որպէսզի փորձառականօրէն անդրադառնանք մեր ճշմարիտ էութեան, որ Քրիստոսի ներկայութիւնն է մեր մէջ: Այս երգերուն երկուքը «Գիշերային» ժամերգութեան առաջին երկու երգերն են՝ «Յիշեսցուք 'ի գիշերի...» եւ «Առաւօտ Լուսոյ»: Երրորդ երգը առնուած «Առաւօտեան» ժամերգութենէն «Սիօնի Որդիք»-ն է, իսկ չորրորդն ալ՝ «Արեւազալի» ժամերգութենէն «Լոյս 'ի Լուսոյ» երգը:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻԻ 850- րդ տարեկիցը

2023 թուականին կը նշուի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ երանաշնորհ հայրապետներէն Ս. Ներսէս Շնորհալիի վախճանման 850-րդ տարեկիցը: Այս թուականը ընդգրկուած է նաեւ ԻԻՆԷՍՔՕ-ի ցուցակին վրայ:

Կը նախատեսուի, որ Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը տարեմուտին այս առթիւ հրապարակէ սրբատառ կոնդակ մը, որպէսզի Սուրբ Հայրապետի յիշատակը տօնախմբութիւններով ոգեկոչուի ամբողջ հայաշխարհէն ներս: Տարուան տեւողութեան գիտաժողովներ եւ այլ ձեռնարկներ տեղի կ'ունենան թէ՛ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ թէ Երեւանի Մատենադարանին մէջ:

Թուրքիոյ մէջ ալ կը նշուի այս յատկանշական թուականը, որու առթիւ ուխտագնացութիւն մը կը նախատեսուի դէպի Հռոմկլայ, ուր Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետը պաշտօնավարած է՝ որպէս կաթողիկոս ու թաղուած:

Միջեկեղեցական հարթութեան վրայ ալ պիտի արժեւորուի այս տարեկիցը: Յառաջիկայ աշնան Հայաստանեայց Առաքելական եւ Հռոմէական Կաթողիկ քոյր եկեղեցիներու համատեղ նախաձեռնութեամբ Հռոմի մէջ էքիւմենիք ծաւալուն ծրագիրով մը պիտի յիշատակուի Ս. Ներսէս Շնորհալին: Հռոմի այս ծրագիրը թէեւ տակաւին աստիճանաբար կը ձեւաւորուի, սակայն, կենթադրուի, որ կեանքի կոչուի ամենաբարձր մակարդակի վրայ: Վատիկանի Ս. Պետրոս Մայր տաճարին մէջ նախատեսուած արարողութիւնը կրնայ կայանալ երկու եկեղեցիներու հայրապետներուն մասնակցութեամբ: Բաց աստի, Միքսթինեան մատրան մէջ Շնորհալիի շարականներով համերգ մը կը նախատեսուի: Նախատեսուած է նաեւ մասնաւոր գիտաժողով մը:



-Ա-
ԳԻՇԵՐԱՅԻՆ
ԺԱՄԵՐԳՈՒԹԵՆԷՆ
ԵՐԳ
«ՅԻՇԵՍՅՈՒՔ Ի ԳԻՇԵՐԻ»



ՅԻՇԵՍՅՈՒՔ 'Ի ԳԻՇԵՐԻ

Մարդ արարած ընդհանուր առմամբ, իր հինգ զգայարանքներէն ստացած տուեալներուն հաւատք կ'ընծայէ եւ զանոնք կ'ընդունի իբր ճշմարտութիւն: Բայց, գտնուած են անձեր՝ նման մարդարէներուն, ինչպէս նաեւ Յիսուս, որոնք սորվեցուցած են հոգեկան կեանքի եւ Աստուծոյ գոյութեան մասին: Հակառակ այս իրողութեան կան անձեր, որոնք Աստուծոյ գոյութեան չեն հաւատար: Նաեւ կան ուրիշներ, որոնք Աստուծոյ կը հաւատան բայց իրենց համար հոգեւոր կեանքը կարելի է միայն ապագային՝ Ֆիզիքական մարմնի մահէն վերջ: Շատերուն համար նման անվերջ ժամանակ երջանիկ «յաւիտենական կեանք»-ի արժանի ըլլալու համար բաւ է միայն հաւատալ եւ քոնէ քիչ մըն ալ «բարի» ըլլալ: Այս երգով, որ «Գիշերային ժամերգութեան» առաջին երգն է, Ներսէս Շնորհալին մեզ կը խթանէ որպէսզի վերջ տանք մեր խաւարամըտութեան եւ ձգտինք աւելի բարձր գիտակցութեան մը, որպէսզի ազատինք ճշմարտութեան նկատմամբ մեր սխալ ըմբռնումներէն եւ չփարինք պատրանքին: Այս ուղղութեամբ այս երգին մէջ 10 անգամ արթննալու եւ արթնութեան մասին աղերսանքներ կան: Այդ «զարթօնք»-ը պէտք է ըլլայ ներկայ կեանքի ընթացքին եւ ոչ մահէ վերջ՝ ապագային: Առանց այդ զարթօնքին մարդ ճշմարտութիւնը չի կրնար ըմբռնել՝ հասկնալ, հետեւաբար ջանք չ'ըներ իր մէջ ճշմարիտ փոփոխութեան համար եւ չ'արժանանար յաւիտենական կեանքի, որ ոչ թէ ապագային է այլ՝ ներկային մէջ է եւ ոչ անվերջ ժամանակ այլ՝ ժամանակի դրութենէ դուրս ըլլալն է:

Յիշեսցուք 'ի գիշերի զանունն քո, Տէր:

Այս տողը Սաղմոս ՃԺԸ (118) (աշխարհաբար Ս. Գիրքին մէջ Սաղմոս 119) համար 55-էն առնուած է: Գիշերը արեւու լոյսին բացակայութիւնը կը ներկայացնէ, հետեւաբար ամէն ինչ մթութեան մէջ կ'ըլլայ եւ դժուար անոնց ճշմարտութիւնը տեսնել: Նմանապէս Աստուծոյ անունը յիշել, բառացի իմաստով, «Եհովա» անունը յիշել չէ: Այլ ամէն ինչ իրենց փոխաբերական իմաստները ունին: Մթութիւնը ներկայ մարդուն խաւարամտութիւնը կը ներկայացնէ: Ուրեմն աղերսանքը այդ խաւարամիտ մարդուն համար անդրադարձ մըն է, որ այս աշխարհի զանազան զբաղմունքներուն մէջէն ինք նաեւ յիշէ, թէ աշխարհի զանազանութեան ճշմարտութեանէն զատ, կայ նաեւ ճշմարտութիւն մը, որ ինք Անոր փորձառականօրէն չէ գիտակցած: Այդ ճշմարտութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է մեր մէջ: Այդ ճշմարտութիւնը մեր ճշմարիտ էութիւնը՝ մեր հոգին է: Այս յիշողութիւնը առաջին քայլն է արթնութեան, որպէսզի մարդ իր գիտակցութեան մակարդակը բարձրացնելով նաեւ գիտակցի իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի ներկայութեան իր մէջ եւ ջանք ընէ Զայն լրիւ յայտնաբերել իր մէջ:

Բղիւսեցէն սիրտք մեր զբան բարի, եւ
լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր
Թագաւորիդ:

Վերոյիշեալ անդրադարձէն յետոյ, որպէսզի Քրիստոս անձին մէջ յայտնուի, անձը երկրորդ քայլ մը եւս պէտք է առնէ: Այդ ալ անձին

մէջ փոփոխութեան մը անհրաժեշտութիւնն է: Երգին այս երկու տողերը կը ներկայացնեն այդ փոփոխութիւնը: Այնուհետեւ մեր բոլոր խորհուրդները, ուրկէ ծնունդ կ'առնեն մեր խօսքերն ու արարքները, պարտ են «բարի» ըլլալ: Սիրտը զգացումներուն վայրն է, հետեւաբար մեր զգացումներն ալ պարտ են բարի ըլլալ, այսինքն սիրով լի, կարեկից, ինքնազոհ, օգնող: Սիրտը փոխաբերաբար օգտագործուելով կը ներկայացնէ մարդուն միտքը՝ հետեւաբար խորհուրդները եւ այդ խորհուրդները պարտ են բարի ըլլալ: Մարդուն բոլոր խօսք ու արարքները պարտ են Աստուծոյ՝ Երկնաւոր Թագաւորին, փառքը ցոլացնել եւ մեր կեանքն ալ ինքնաբերաբար պատմած կ'ըլլայ Աստուծոյ գործերը:

՚Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ, Տէր:

Մեր խաւարամտութենէն արթննալով՝ որոշ չափով «յարութիւն» առնելով, մեր կենցաղը՝ մեր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքները Քու փառք կը ներկայացնեն, հետեւաբար անոնք բոլորն ալ Քու ներկայութեանդ «խոստովանանք» ըլլան:

Չաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ՚ի գաւիթս քո ՚ի մէջ նոր Երուսաղէմի:

Երբ անհատը կը յաջողի իր կենցաղը փոխել եւ ընթանալ կատարելութեան ուղիէն եւ վերոյիշեալ Աստուածահաճոյ կենցաղ մը կերտել, ինք պատրաստ կ'ըլլայ Տիրոջ աղօթելու: Հարկաւ, այս աղօթքը Աստուծոյ մէջ առ ու ան

խնդրելը չէ: Աղօթքը, իր ամենավեճ ձեւով, խոկալն է: Անտարակոյս, այս աղօթքը «'Ի վերին Երուսաղէմ» մտնելու առաջին քայլն է, հետեւաբար անհատը տակաւին «գաւիթին» մէջն է:

՚Ի գիշերի համբարձուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր:

Քրիստոսի յայտնութիւնը անձին մէջ Աստուծոյ է եւ անձը չի կրնար ինք զայն իրականացնել: Անհատը միայն կրնայ ինքզինք պատրաստել եւ ջանալ ինքզինք արժանացնել այդ յայտնութեան: Անհատը անգամ մը եւս կը շէշտէ իր խաւարամտութիւնը եւ Քրիստոսի շնորհելիք գիտակցութեան մակարդակի բարձրացման համար իր ձեռքերը վեր բարձրացնելով Աստուծոյ կը խնդրէ Անոր օգնութիւնը: «Սրբութեամբ» բառը ակնարկութիւն մըն է իր կենցաղին, որ պարտ է Աստուածահաճոյ ըլլալ՝ նման սուրբի մը կենցաղին, ապա թէ ոչ իր օգնութեան աղերսանքը անօգուտ կ'ըլլայ:

՚Ի ձայն գոհութեան ամենայն Հոգիք օրհնեցէք զՏէր:

Երբ անհատ մը իր հոգեւոր կեանքի մէջ յառաջացման որոշ հանգրուանի մը կը հասնի, ինք կը հասկնայ թէ աշխարհի վրայ, ինչպէս նաեւ ընդհանուր տիեզերքի մէջ, ամէն ինչ կ'ընդհանայ ըստ Աստուծոյ կամքին: Ան նաեւ կը հասկնայ թէ իր այս աշխարհիկ կեանքին մէջ ալ իր կեանքի բոլոր պատահարները՝ անոնք ըլլան լաւ ու վատ, կ'ըլլան ըստ Աստուծոյ կամքին: Հետեւաբար ամէն կացութեան եւ ամէն պատահարի համար Աստուած օրհնաբանէք եւ

մեր գոհունակութիւնը յայտնենք: Որովհետեւ, եթէ լաւ պատահարները վարձատրութիւն են, վատերն ալ դաս, որպէսզի մեր նախկին սխալները յաճախ չկրկնենք եւ «պարտքերէն» ալ ազատինք:

Չարթիք փառք իմ, զարթիք, եւ ես զարթեայց առաւօտուց. Ալէլուիա:

Այս երկու տողը, ինչպէս նաեւ յաջորդը կը ներկայացնեն անձին ինքզինքին ուղղած հրահանգը: Իսկ յաջորդող ութ «զարթիք»-ները, որոշ արթնութեան մը տէր անհատին զարթօնքին տուած խանդավառութեան արտայայտութիւնը կը ներկայացնեն, երբ ան կը ջանայ հրապուրել ուրիշներն ալ՝ ձգտիլ նման արթնութեան: Այդ արթնութեան տուած խանդավառութիւնը կարծէք անհատը կը մղէ տանիքներուն վրայէն բոլորին յայտարարել: Անհատը կը յուսայ որ իր Փառքը արթննայ: Ո՞վ կամ Ի՞նչ է իր Փառքը: Անհատին Փառքը իր ճշմարիտ էութիւնը՝ իր Հոգին՝ Քրիստոսն է: Մարդուն կեանքը իր ներքին Քրիստոսի երազն է: Երազողը երազին մէջ ըլլալով հանդերձ, ան հոն չի տեսնուիր: Երբ Քրիստոս խորունկ քունի մտնէ, երազն ալ կը վերջանայ, որ մեր հասկացողութեամբ մահ կը կոչենք: Քրիստոս դարձեալ կ'երազէ եւ զայն վերամարմնացում կը կոչենք: Այս բոլորին ընթացքին Քրիստոս տեսանելի չէ: Բայց երբ Քրիստոս իր քունէն արթննայ՝ յայտնուի, անձն ալ Քրիստոսի յայտնութեան փորձառութիւնը կ'ունենայ: Անձին խաւարամտութիւնը մաքողովին կը փարատի եւ ինք կ'արթննայ «առտուայ Լոյսին», որ Քրիստոսի Լոյսին ներկայութիւնը կը ներկայացնէ:

Չարթիք ընդ զուարթունս, մանկունք վերինն Սիօնի. Ալէլուիա:

Այս տողերուն մէջի խօսքը «վերին Սիօն»-ին զաւակներուն ուղղուած է: Ո՞վքեր են «վերին Սիօնի զաւակները: Անոնք համայն մարդկութիւնը կը ներկայացնեն: Միթէ Ս. Գիրքին մէջ չէ՞ գրուած. «դուք Աստուծոյ որդիներ էք» եւ դարձեալ. «դուք աստուածներ էք»: Այս խօսքը ազդարարութիւն մըն է տրուած բոլորին, որպէսզի, ինչպէս առաջուց յաւիտենական կեանքի արժանացողները զարթօնք ունեցած էին՝ իրենց խաւարամտութենէն արթնցած եւ աւելի բարձր գիտակցութեան տէր ըլլալով ճշմարտութիւնը տեսած էին եւ Քրիստոս իրենց մէջ յայտնուած էր, նոյն զարթօնքը մեր մէջն ալ կրնայ իրականանալ: Անտարակոյս, անհատը այս ուղղութեամբ պարտ է պատշաճ քայլերը առնել:

Չարթիք որդիք լուսոյ. 'ի յօրհնութիւն Հօրն լուսոյ. Ալէլուիա:

Այս տողերուն ամենակարեւոր մասը առնուած է Թեոսաղոնիկեցիներուն գրուած Ա. նամակէն. (Գլուխ Ե:5): Լուսոյ որդիները անոնք են որոնք անդրադարձած են իրենց խաւարամտութեան եւ կը ձգտին Քրիստոսի յայտնութեանը իրենց մէջ: Անոնք իրենց զարթօնքով Աստուծոյ Լոյսը փառաբանած պիտի ըլլան, որովհետեւ իրենց մէջ Քրիստոսի յայտնութեամբ Աստուծոյ փառքը յայտնած պիտի ըլլան: Քրիստոս Աստուծոյ Լոյսն է: Մենք ալ Լուսոյ որդիներ ենք որովհետեւ մեր ճշմարիտ էութիւնը՝ մեր Հոգին Քրիստոս ինքն է:

Չարթիք փրկեալք արեամբ, եւ տուք զփառս փրկողին. Ալէլուիա:

Յիսուս մեզի ցոյց տուաւ ու սորվեցուց կատարելութեան ուղին: Ան մեզի ցոյց տուաւ փրկութեան ճամբան: Ան մեզի սորվեցուց զոհողութեան արժէքը: Ան մեզի սորվեցուց յաւիտեանական կեանքի արժանանալու միջոցը: Ան մեզի սորվեցուց նաեւ յարութեան արժանանալու միջոցը: Յիսուս այս բոլորը ըրաւ իր ապրած կենցաղով՝ մեզի ցոյց տալով եւ ոչ թէ միայն խօսքով: Ինք իր «Ես»-ը զոհեց խաչին վրայ եւ յարութիւն առաւ միանալով Բրիստոսի: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «խաչդ առ ետեւես եկուր»: Ինք իր բոլոր չարչարանքները ընդունեց իբրեւ իր Հօր՝ Աստուծոյ կամքը, հետեւաբար եթէ կ'ընդունինք Յիսուսի սորվեցուցածները, պէտք չէ՞, որ մենք ալ մեր կեանքի բոլոր լաւ ու վատ պատահարները ընդունինք իբրեւ մեր Հօր՝ Աստուծոյ կամքը եւ յօժարաբար հանդուրժենք անոնց առանց դժգոհելու եւ կամ դանդատելու: Այն ատեն զինք՝ մեր Փրկիչը, փառաբանած կ'ըլլանք, որ մեզի փրկութեան ճամբան սորվեցընելով մեզ փրկած է:

Չարթիք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. Ալէլուիա:

Այս տողերն ալ հաւանաբար առնուած ըլլան Ս. Գիրքին մէջ 97-երորդ Սաղմոսին առաջին համարէն: «Նոր ժողովուրդք»-ը Յիսուսի Նիկողեմոսին ըսած «վերստին ծնունդ»-ը ունեցողներն են: Այսինքն, անոնք, որոնց միտքի ուղղութիւնը արտաքին աշխարհի հրապուրիչ

զանազանութենէն եւ հաճոյքներէն ձերբազատ-
 ւած, դէպի իրենց ներքին Քրիստոսին զարձա-
 փ: Անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնը՝ Անոր
 շնորհած բարձր գիտակցութիւնն է որ անձը կը
 փոխէ՝ կը նորոգէ: Իսկ «նորոգողին» երգուելիք
 նոր երգն ալ փոխաբերութիւն մըն է, որ կը
 ներկայացնէ մարդուն ապագայ կենցաղը, որ
 պարտ է հաճելի ըլլալ Աստուծոյ եւ ըստ Անոր
 կամքին: Մարդ իր մէջ ունի թէ՛ Քրիստոս եւ
 թէ՛ սատանան՝ իր «Ես»-ը: Ընդհանուր առմամբ
 մարդ կ'ապրի ըստ իր «Ես»-ին փափաքներուն:
 Ան, իր խորամանկութեամբ, շատ անգամ կը
 ծօծի իր «Ես»-ին եւ իր ներքին Քրիստոսի
 միջեւ: Ճիշդ ասոր համար Յիսուս ըսաւ. «չէք
 կրնար երկու տիրոջ ծառայել»: Ուրեմն «նոր
 երգ»-ը անտեսելն է «Ես»-ը եւ յարիլ է ու
 փարիլ Քրիստոսի:

Զարթիք հարսունք հոգւով, սպասեալք կալոյ Ս. Փետային. Ալէլուիա:

Այս երկու տողերը, ինչպէս նաեւ յաջորդող
 երեք «Զարթիք»-ները ակնարկութիւններ են
 Յիսուսի «Տասը կոյսերու առակին»: (Տես նաեւ
 «Աւետարանի Խորհուրդները - Բ - Յիսուսի Առակները»
 գիրքիս մէջ էջեր 130-133): Մարդուն կեանքին
 նպատակը Քրիստոս իր մէջ յայնաբերել եւ
 Անոր հետ միանալով Անոր հետ մէկ ըլլալն է:
 Ինչպէս հարսանիքի արարողութեամբ փեսայ եւ
 հարս միանալով մէկ ընտանիք կ'ըլլան, նմանա-
 պէս համայն մարդկութիւնն ալ Քրիստոսի՝ Ս.
 Փետային «հարս»-երն են: Երբ Քրիստոսի հետ
 հաղորդուելու կը սպասենք, պարտ ենք համբե-
 րութեամբ, յարատեւութեամբ եւ առանց վարա-

նուժի միշտ պատրաստ ըլլալ: Քրիստոս մեր Հոգին է, ուստի միութիւնն ալ հոգեկան գետնի վրայ է, հետեւաբար «հարսուենք հոգւով» ենք:

Զարթիք վառեալք լուսով ըստ իմաստուն Ս. Կուսանայն. Ալէլուիա:

Այս տողերը անգամ մը եւս ականարկութիւն են վերոյիշեալ առակին: Ինչպէս գիտենք տասը կոյսերուն հինգը յիմար եւ հինգն ալ իմաստուն էին: Մենք ալ, նման իմաստուն կոյսերուն, պարտ ենք իմաստուն ըլլալ: Իմաստութիւնը Աստուծոյ տուած շնորհներէն մին է: Երբ անհատը Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւն ստանալով կը յաջողի իր գիտակցութեան մակարդակը բարձրացնել, կ'ըլլայ նաեւ իմաստուն: Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւնն ալ մեզի մեր ներքին Քրիստոսէն կը տրուի: Միթէ Յիսուս Քրիստոս իր աշակերտներուն չ'ըսա՞ւ. «ձեզի Ս. Հոգին պիտի զրկեմ»: Հետեւաբար այդ իմաստութիւնը անձին իր ներքին Քրիստոսէն կու գայ: Որպէսզի աս ալ կարելի ըլլայ պարտ է անձը որոշ չափով արթնութեան մը տէր ըլլայ: Ահա՛, աս է իմաստը «Զարթիք վառեալք լուսով»-ին: Այս պարագային կոյսերուն «լապտերը» մարդը կը ներկայացնէ: Իսկ «վառեալք լուսովն» ալ Քրիստոսի Լոյսը կը ներկայացնէ, որ ներկայ է միայն երբ անհատը արթնցած է՝ «զարթուցեալ» է:

Զարթիք, պատրաստեցէք իւզ լապտերաց զջերմ արտասուս. Ալէլուիա:

Շատ հետաքրքրական արտայայտութիւն մը: Անգամ մը եւս արթննալու ազդարարութիւն մը:

Այս անգամ նպատակը «լապտերին իւղը պատ-
րաստել»-ն է: Առանց իւղի լապտերը չի կրնար
լոյս տալ: Իսկ լապտերին լոյսն ալ Քրիստոսի
Լոյսն է որ անձին մէջ որոշ չափով կը յայտ-
նուի: Որպէսզի այդ Լոյսը լրիւ յայտնուի՝
որպէսզի Քրիստոս անձին մէջ յայտնուի, անձը
ինք պէտք է այդ իւղը պատրաստէ որպէսզի
Քրիստոսի յայտնութեան կարենայ արժանի
ըլլալ: Այս պատրաստութիւնը կարելի է միայն
«զջերմ արտասուս»-ով: Ի՞նչ կը նշանակէ «ջերմ
արտասուս»-ը: Այն անձը որ ճշմարիտ ապաշ-
խարութիւն կ'ունենայ, ան իր նախքին մեղքե-
րուն համար սրտաբուխօրէն կուլայ: Միթէ
չե՞նք ըսեր. «Ճշմարիտ ապաշխարութեան մէկ
կաթիլ արցունքը, Աստուծոյ տրուած ամենա-
թանկագին նուէրն է»: Հետեւաբար «զարթօնք»-
ը կարելի է միայն ճշմարիտ ապաշխարու-
թեամբ:

Չարթիք եւ մի ննջէք, նման յիմար կուսից նիրհէք. Ալէլուիա:

Անգամ մը եւս, ազդարարութիւն արթնու-
թեան, որպէսզի մեր հոգեկան քունէն արթն-
նանք: Ինչպէս Յիսուսի առակին մէջի յիմար
կոյսերը քնացան, մենք ալ նման յիմարութիւն
չ'ընենք: Քունը գիտակցութեան պակասը կը
ներկայացնէ: Միթէ երբ կը քնանանք մեր
գիտակցութեան մակարդակն ալ չի՞ նուազիր
եւ ոչ մէկ բանէ տեղեակ կ'ըլլանք: Հետեւաբար
ջանք պէտք է խնայենք մինչեւ որ արժանա-
նանք բարձր գիտակցութեան:

Չարթիք երկիրպագցուք եւ արտասուուք զայս ասասցուք. Ալէլուիա:

Արթննանք որպէսզի Աստուծոյ երկիրպագենք եւ «Ալէլուիա» ըսենք, այսինքն Աստուած գոհաբանենք եւ զայն կատարենք արտասուելով՝ ճշմարիտ ապաշխարութեամբ:

Չարթիր, ընդէ՛ր ննջես. Տէր, մի մերժեր զմեզ ի սպառ. Ալէլուիա:

Վերեւ ներկայացուած տասը «Չարթօնք»-ները հրամաններ էին տրուած համայն մարդկութեան: Հետեւաբար բոլորն ալ սկսած էին յոգնակի հրամայականով՝ «Չարթիք»-ով: Իսկ վերեւի այս երկու տողի սկիզբը հրամայական չկայ, այլ կայ աղերսանք ու պաղատանք: Ան նաեւ եզակի ըլլալով ուղղուած է մէկ «հոգիի»: Ինչպէս վերեւ գրուած էր, եթէ մարդուն կեանքը իր ներքին Քրիստոսի երազն է, որպէսզի անհատը Քրիստոսի փորձառութիւնը ունենայ, հարկ է որ Քրիստոս իր քունէն՝ երազէն արթըննայ: Այս աղերսանքը Քրիստոսի արթնութեան՝ յայտնութեան համար է: Որովհետեւ անհատը ինքզինք պատշաճ կերպով պատրաստած կը սպասէ: Ան կ'աղօթէ, կ'աղերսէ որպէսզի Քրիստոս զինք ամբողջովին չմերժէ եւ քոնէ փոքր չափով իր մէջ յայտնուի:



**Արի, Տէր, օգնեա մեզ. տացուք անուանդ
քում զփառս:**

Այժմ եւ յաւէտ. Հօր եւ Որդւոյ եւ Ս.

Հոգւոյն. Ամէն:

Այս երկու նախադասութիւնները պարտ
ենք միասին վերլուծել, որովհետեւ երկրորդը
առաջինին շարունակութիւնն է եւ գաղափարը
կ'ամբողջացնէ: Այս տողերը աղերսանք մը կը
ներկայացնեն: Անհատը Տէրոջմէ կը խնդրէ
Անոր օգնութիւնը, որպէսզի Քրիստոս զինք քաջ
եւ առաքինի ընէ: Այս խնդրանքին բուն նպա-
տակը այն է, որ անհատը կարողանայ Աստուծոյ
անունը փառաւորել: Անտարակոյս Աստուծոյ
անունը փառաւորել, ասդին-ու-անդին շարու-
նակ «փառք Քեզ Տէր» ըսել չէ, այլ ան մեր խոր-
հուրդներուն, խօսքերուն եւ արարքներուն Աս-
տուծոյ կամքին՝ Ս. Հոգիի տիեզերական օրէնք-
ներուն հետ ներդաշնակ ըլլալն է: Ան՝ մեր կեն-
ցաղով Աստուած փառաբանել ու փառաւորելն
է: Աստուած մէկ է, որով երբ անհատը իր կեն-
ցաղով Աստուած կը փառաբանէ եւ կը փառա-
ւորէ, այդ կ'ըլլայ թէ՛ Հայր Աստուծոյ, թէ՛ Ս.
Հոգիի եւ թէ՛ Որդւոյն՝ Քրիստոսի փառաբանու-
թիւնը ու փառաւորուիլը: Իսկ «այժմ եւ յա-
ւէտ» բառերով ալ անհատը կը յայտնէ թէ իր
կենցաղը Աստուածահաճոյ է եւ յաւիտեան պի-
տի չփոխուի: Անտարակոյս հոս անհատը «յա-
ւէտ» բառը օգտագործած է մարդկային հասկա-
ցողութեամբ, «ընդմիշտ» իմաստով, քանզի
մարդ ժամանակի դրութեան մէջ կ'ապրի: Իսկ
«յաւիտեանականութիւնը» ժամանակի դրութենէ
դուրս ըլլալն է: Հետեւաբար միայն Աստուած

եւ ներկան յաւիտեան են: Այս իմաստով ալ յաւիտենական կեանքը միայն ներկային մէջ Աստուծոյ՝ Քրիստոսի հետ «մէկ» ըլլալով՝ Քրիստոսի մէջ լուծուելով կարելի է:

Չարթուցեալքս 'ի զբաղմանէ գիշերային Հանգստենէ:

Այս հանգրուանին անհատը ինքզինք որոշ չափով արթնցած կը նկատէ: Այդ արթնութիւնը իր խաւարամիտ ըլլալուն հասկացողութիւնն է: Այս հասկացողութիւնը իրեն չյայտնուած ինք իր ունեցած գիտակցութեան մակարդակով շատ հանգիստ էր, որով ան պատրանքը ընդունած էր իբրեւ ճշմարտութիւն եւ իր միտքն ալ այդ երեւակայական ճշմարտութեան յայտնաբերած զանազան զբաղմունքներով կալանաւորուած կարող չէր հասկնալ, թէ այն ինչ որ ինք ճշմարտութիւն կը կարծէր միայն պատրանք մըն էր եւ իր գիտակցութենէն խուսափող իսկական ճշմարտութիւն մը գոյութիւն ունէր:

Հնորհեսցէ մեզ Մարդասէր Տէր, Մխիթարութիւն եւ 'ի սփոփանս Եկեղեցւոյ:

Երբ անհատը կ'անդրադառնայ իր սխալին, անտարակոյս իր հանգիստը կը խանգարուի: Անհատը ինքզինք թէ՛ յանցաւոր եւ թէ՛ մեղաւոր կը համարէ: Ուրեմն այս երկու տողերուն մէջ անհատը Աստուծոյ կը խնդրէ մխիթարանք եւ այդ մխիթարանքն ալ Եկեղեցւոյ տուած սփոփանքն է: Եկեղեցին ալ նման «զարթօնք»-ի փորձառութիւնը ունեցողներու հաւաքականութիւնն է: Այս մխիթարանքը Աստուծոյ մէկ շը-

նորհժքն է: Բայց շատ լաւ գիտենք, թէ Աստուած մարդասէր է եւ Աստուծոյ բոլոր շնորհները անընդհատ բոլորին վրայ կը տեղան: Մեզմէ կախեալ է, թէ ինչ աստիճանով մենք մեզ ընդունակ «անօթ»-ներ կ'ընենք այդ շնորհներուն:

Ահիւ եւ դողութեամբ կացցուք 'ի յաղօթս:

Մեղաւոր անձ մը ամենագէտ Աստուծոյ անհունութեան առջեւ ինքզինք կը «տեսնէ» իբրեւ ոչնչութիւն մը, հետեւաբար երբ Աստուծոյ կ'աղօթէ՝ կամ կը ջանայ Աստուծոյ հետ «խօսիլ»՝ իր խնդրանքները ներկայացնել, անոնք կ'ըլլան նախ հիացումով ինչպէս նաեւ դողդղալով եւ երկիւղածութեամբ: Ահա՛, աս է իմաստը «Ահիւ եւ դողութեամբ»-ին:

Եկեալ խոստովանեսցուք պանցանս:


Անձը Աստուծոյ հետ ի՞նչ պիտի «խօսի»: Այդ «խօսիլը» գործուած մեղքերու խոստովանանքն է: Ան ճշմարիտ ապաշխարութիւնն է: Խոստովանանքը պարզապէս գործուած մեղքերուն համար ներողութիւն խնդրել եւ յետոյ դարձեալ նոյն մեղքերը գործել եւ դարձեալ խոստովանիլ չէ: Այլ ան ապաշխարութիւնն է եւ այնուհետեւ նոյն եւ նման մեղքեր չգործելն է: Այս պարագային, ի՞նչ է անհատին գործած յանցանքը՝ մեղքը: Այդ մեղքը Որդւոյն՝ Քրիստոսի դէմ գործուած մեղքն է: Ան մարդուն իր ներքին Քրիստոսը անտեսելով ապրիլ՝ ըստ իր «Ես»-ին իր կենցաղը կերտելն է: Բայց երբ անհատը իր մտքին ուղղութիւնը կը փոխէ, արտաքին «սա»-«դա»-«նա»-է դէպի իր ներքին Քրիստոսի եւ կը յարի ու կը փարի Անոր, քան

Թէ իր «Ես»-ին ինք ապաշխարած կ'ըլլայ: Ահա',
աս է «վերստին ծնունդ»-ը:

Եւ գտցուք 'ի Քրիստոսէ զքաւութիւն եւ զմեծ զոգորմութիւն:

Որովհետեւ, Աստուծոյ Որդւոյն՝ Քրիստոսի
դէմ գործուած մեղքերը ներելի են եւ Քրիստոս
սիրոյ շտեմարանն է եւ ոգորմած ու ներողա-
միտ, ճշմարտապէս ապաշխարող անհատն ալ
Քրիստոսի ոգորմածութեամբ իր գործած այդ
ահռելի մեղքին քաւութեան կ'արժանանայ:
Պէտք չէ մոռնալ թէ միայն Ս. Հոգիի դէմ
գործուած մեղքերը աններելի են եւ մինչեւ
վերջին «լուման» մեր այդ պարտքերը պարտ
ենք տալ:

Ամէն. Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա:



«ԱՌԱՔՈՏ ԼՈՒԲՈՂ»

Արեգակն արշալոյսի
Իր լեզակի շողերով
Ազդակ մըն է կեանքի
Արժանութեան հրաւերով:

Արեգակն առաւօտեան
Իր ջերմագին շողերով
Խթանը մարդկութեան
Արժանութեան մղելով:

Արեգակն երեկոյեան
Իր կարմրակ շողերով
Հրաժեշտը բնութեան
Միժողորմար խաւարելով:

Արեգակը գիշերուան
Լուսնի տիպար շողերով
Ցոլացումն է միայն
Անուղղակի ընթացքով:

Արեգակը ամէն մի օր
Իր զանազան շողերով
Մեր վրայ կ'ազդէ բոլոր
Իր անվերջ դրդումով:

Արեգակը ի՞նչ կ'ուզէ
Առտունն լոյսը տեսնե՞նք
Ապա թէ ոչ Ան կ'ուզէ
Լոյսին Առաւօտը տեսնենք:

Վ.Ս.



-Բ-

ԳԻՇԵՐԱՅԻՆ
ԺԱՄԵՐԳՈՒԹԵՆԷՆ
ԵՐԳ
«ԱՊՈՍՏՈՆԻԱՆ»



ԱՌԱՖՈՏ ԼՈՒՍՈՅ

Գիշերային ժամերգութեան այս երգը, սկիզբէն մինչեւ վերջը, կը ներկայացնէ իր անբաղձալի ներկայ վիճակին՝ իր խաւարամտութեան եւ գործած մեղքերուն անդրադարձած անհատի մը աղերսանքը: Ի՞նչ է այդ աղերսանքը: Ատիկա իր անձին մէջ լրիւ փոփոխութեան՝ բնոյթի, կենցաղի եւ գիտակցութեան մակարդակի փոփոխութեան մը աղերսանքն է: Մարդ իր կեանքին մէջ կը փափաքի շատ բաներու տէր ըլլալ եւ այդ ուղղութեամբ ալ ջանք չի խնայեր մինչեւ որ գայն իրականացնէ: Մինչդեռ մարդուն կեանքին նպատակը Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնելն է: Երբ ան կ'անդրադառնայ այս իրողութեան, միայն այն ատեն է, որ իր միտքը՝ խորհուրդները ուղղութիւն կը փոխեն՝ արտաքինէն դէպի ներքինին: Այն ինչ որ արտաքին է, ճշմարտութիւն չէ այլ՝ է պատրանքային: Իսկ, ան ինչ որ ներքին է Քրիստոսի՝ Աստուծոյ ներկայութիւնն է անհատին մէջ, Ան իր հոգին է: Հետեւաբար նման անդրադարձ մը անհատին մտքին մէջ կ'արթնցնէ ճշմարտութիւնը գտնելու փափաքը: Անձը պէտք չէ որեւէ ջանք խնայէ մինչեւ որ իր փափաքը իրականանայ: Երբ անհատին փափաքածները կը պատկանին «նիւթական աշխարհին»՝ պատրանքին, անհատն ալ կը կարծէ թէ իր այդ փափաքին իրականացումը բաւ է: Երբ հարցը կ'ու գայ հոգեւոր կեանքի եւ ինքնափոփոխութեան, նամանաւանդ գիտակցութեան մակարդակի բարձրացման, ինք անկարող է իր ջանքերով այդ փոփոխութիւնը իր մէջ իրականացնել, այլ՝ այդ փոփոխութիւնը կարելի է միայն Աստուծոյ շնորհքով: Հետեւաբար Աստուածապաշտութիւնը անհրաժեշտ է: Այս ուղղութեամբ տես նաեւ այս գիրքին վերջաբանը: Չեմ կարծեր աշխարհի վրայ գտնուի ուրիշ նման հիանալի աղերսանք մը առ Աստուած:

Ա

ԱՌԱՍՈՍ ԼՈՒՍՈՅ,

ԱՐԵՎԱԿԻՆ ԵՐԵՎԱՆ,

ԱՆ ԻՍ ԵՅՍ ԾԱԳԷԱ:

Այս բառերով Շնորհալին Աստուծոյ Երրորդու-
թիւնը կը ներկայացնէ, նաեւ մեր կեանքին նպատակը:
Երբ «ԱՌԱՍՈՍ ԼՈՒՍՈՅ» բառերը կը կարդանք, կրնայ
կարծուի թէ անոր իմաստը «աստուան լոյսն» է: Երգին
մէջ չէ գրուած «Լոյս առաւօտով», այլ՝ «ԱՌԱՍՈՍ ԼՈՒ-
ՍՈՅ»: Առաւօտը օրուան սկիզբն է, հետեւաբար հոս այդ
բառը գործածուած է փոխաբերական իմաստով, այս-
ինքն մատնանշելու համար սկիզբ մը: Ի՞նչի սկիզբը.
լոյսին սկիզբը: Լոյսը զօրութիւն կը ներկայացնէ ինչ-
պէս նաեւ գիտութիւն, հետեւաբար գիտակցութիւն:
Աւետարանին մէջ գրուած է. «Աստուած Լոյս է»: Հե-
տեւաբար ակնարկը Հայր Աստուծոյ համար է, որ ամէն
ինչի սկիզբն է եւ ամէն ինչ Իրմէ բղխած է: Երկրորդ
տողին մէջ կը կարդանք. «Արեգակն արդար»: Արեգակը
Աստուծոյ լոյսն է: Այդ բառն ալ հոս փոխաբերական
իմաստով գործածուած է: Արեգակը կը ներկայացնէ
Աստուծոյ կենսատու զօրութիւնը, այսինքն Ս. Հոգին:
Միթէ կենսաբանները (biologists) չե՞ն ըսեր. «Առանց արե-
ւի աշխարհի վրայ կեանք գոյութիւն պիտի չունենար»:
Արեգակը նաեւ ներկայացուած է որպէս արդար: Ճիշդ
ասոր համար էր որ Յիսուս մեզի ըսաւ. «Ս. Հոգիի դէմ
գործուած մեղքերը աններելի են»: Հետեւաբար ինչ
մեղք որ կը գործենք Ս. Հոգիի դէմ, այդ մեղքերուն
յառաջ բերած բոլոր արդար հատուցումներուն պիտի
ենթարկուինք: Այսպիսի հասկացողութեամբ մը ամե-
նեւին պէտք չէ դժգոհինք մեր կեանքի անբաղձալի
պատահարներուն համար, որովհետեւ մեր կեանքի
բոլոր պատահարները՝ լաւ ու վատ, մենք կերտած ենք:

Երբ որդի տողին մէջ կը կարդանք. «Առ իս Լոյս ծագեալ»։ Ս. Հոգիին այդ լոյսը, որ մեր մէջ, ինչպէս նաեւ ընդհանուր ստեղծագործութեան մէջ, ծագած է եւ կը ծագի Որդի Աստուծոյն՝ Քրիստոսն է։ Քրիստոս ամէն անհատի «հոգին»՝ էութիւնն է։ Բայց մարդ իր խաւարամտութեամբ եւ եսասիրութեամբ կը խափանէ այդ լոյսին իր մէջ եւ իր միջոցաւ լրիւ յայտնութիւնը։ Այս տողով Շնորհալին մեզի կը ներկայացնէ նաեւ մեր կեանքին նպատակը, որ է Քրիստոս լրիւ յայտնաբերել մեր մէջ։ Աղերսանք մըն է, որպէսզի այդ Լոյսը լրիւ ծագի մեր մէջ։ Ճիշդ է, թէ Քրիստոսի այդ բարձր գիտակցութեան (Christ consciousness) յափշտակութիւնը Աստուծմէ է, բայց մենք զմեզ պարտ ենք այդ բարձր գիտակցութեան յափշտակուելու արժանի ընել։ Միթէ մեր գիտակցութիւնը Աստուծոյ անհուն գիտակցութեան մեր սահմանափակած փոքր մէկ մասնիկը չէ՞։ Այդ բարձր գիտակցութեան յափշտակութիւնը Քրիստոսի յայտնութիւնն է անձին մէջ։ Ինչպէս մարդ կարող չէ ինքզինք քնացնել, բայց ինքզինք կը պատրաստէ քնանալու, նմանապէս ալ մարդ կարող չէ գիտակցութեան բարձր մակարդակի մը իր յափշտակութիւնը իրականացնել, քանզի այդ Աստուծմէ է, բայց մարդ կարող է ինքզինք այդ յափշտակութեան պատրաստել։ Այսինքն մարդ կարող է իր բնոյթը, հետեւաբար իր կենցաղը, փոխելով ինքզինք արժանի ընել այդ բարձր գիտակցութեան։ Ինչպէս քունը առանց անձին ջանքերուն անոր գիտակցութիւնը ակնթարթի մը մէջ արթուն մակարդակէն աւելի ցած քունի մակարդակի, կամ քունի մակարդակէն ալ արթուն մակարդակի կը յափշտակէ, նմանապէս գիտակցութեան մեր արթուն կոչած մակարդակէն շատ աւելի բարձր մակարդակի յափշտակութիւնն ալ կ'ըլլայ ակնթարթի մը մէջ ըստ Աստուծոյ կամ քին։

Բ

Բղխումն 'ի Հօրե,
Բղխեա 'ի Հոգւոյս,
Բան քեզ 'ի Հաճոյս:

Առաջին տողը «Բղխումն 'ի Հօրե» դարձեալ կը ներկայացնէ Ս. Հոգին՝ Աստուծոյ զօրութիւնը, որ Հօրմէն բղխած է: Երկրորդ տողը «Բղխեա 'ի Հոգւոյս»-ը աղերսանք մըն է, որ Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւնը մեր մէջ ալ բղխի եւ հոսի: Մեր մէջն ալ Ս. Հոգիի զօրութիւնը մեր ներքին Քրիստոսէն կը բղխի: Միթէ Քրիստոս իր աշակերտներուն չըսա՞ւ. «Ձեզի Ս. Հոգին պիտի զրկեմ» եւ աշակերտները Պենտեկոստէի օրը Ս. Հոգիի զօրութեան արժանացան եւ իրենց բոլոր էութիւնով ցնցուեցան ու իրենց գիտակցութիւնը բարձր մակարդակի յափշտակուեցաւ: Երրորդ տողը «Բան քեզ 'ի Հաճոյս»-ը կը թուի ներկայացնել Աստուած փառաբանելու մեր խօսքերը: Այդ տողերը նաեւ ակնարկութիւն են մեր կենցաղին, որ պէտք է հաճելի ըլլայ Աստուծոյ: Պէտք է մոռնանք թէ խօսքերը յառաջ կու գան խորհուրդներէ, որոնք ծնունդ կու տան արարքներու: Հետեւաբար այս տողն ալ առ Աստուած խոստում մըն է, թէ պիտի ջանանք մեր կենցաղը եւ մեր բնոյթը Աստուծոյ հաճելի ընել:

Գ

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ,
Գլտող զիս արա:

Գանձ բառի գործածումով Շնորհալին կը մատնանըչէ արժէքաւոր գանձի մը ներկայութիւնը: Հարկաւ, այդ Գանձը Քրիստոսի ներկայութիւնն է: Եւ այդ

Գանձը՝ Քրիստոս, ողորմած է եւ ներողամիտ: Պէտք է մոռնալ, թէ Որդւոյն դէմ գործուած մեղքը ներելի է: Հետեւաբար մեզի կը մնայ միայն այդ մեղքին անդրադառնալ եւ մեր հայեացքը փոխել: Երկրորդ տողը «Գանձիդ ծածկելոյ»-ն ակնարկ մըն է այն իրողութեան, թէ Քրիստոսի մեր մէջ ներկայութիւնը, մեր ցած գիտակցութեան մակարդակին պատճառով մեզմէ ծածկուած է, եւ նոյնիսկ տեղեակ անգամ չենք, թէ կարողութիւնը ունինք այդ Գանձը՝ Քրիստոս մեր մէջ յայտնաբերելու եւ այդ Գանձին շնորհած բարձր գիտակցութեան արժանանալ: Երրորդ տողը դարձեալ աղերսանք մըն է, որ մեզ արժանի ընէ այդ Գանձը գտնելու, այսինքն Քրիստոս մեր մէջ յայտնաբերելու:

Դ

Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բաց,
Դասեցոյ վերնոյն:

Առաջին տողը «Դուռն ողորմութեան»-ը ակնարկ մըն է մեր ներքին Քրիստոսի, որ «դուռն» է Ս. Հոգիի զօրութեան մեր մէջ հոսքին: Ս. Հոգիի զօրութիւնը երբ պատշաճ կերպով եւ առատապէս հոսի անձէն ներս, բոլոր ֆիզիքական եւ մտային հիւանդութիւններ, զգացումներ, յուզումներ կ'անհետանան: Ինչպէս վերեւ երկրորդ տունին մեկնաբանութեան մէջ յիշուած է, միթէ Քրիստոս չէ՞ որ Ս. Հոգիի զօրութեան հոսքը կ'արտօնէ: Երկրորդ տողը «Դաւանողիս բաց»-ը աղերսանք մըն է, որպէսզի Քրիստոս Ս. Հոգիի զօրութեան հոսքին դուռը բանայ: Բայց որպէսզի այդ «դուռը» բացուի անձը պարտ է նախ Քրիստոս դաւանող ըլլայ: Քրիստոսի դաւանիլ պարզապէս «ես Յիսուս Քրիստոսի կը հաւատամ» ըսել, բայց միւս կողմէ ալ իր «Ես»-էն

եկած բոլոր յորդորներուն համաձայն ապրիլ չի նշանակեր, այլ՝ ինչպէս Յիսուս մեզի յորդորած էր, «Ես»-ը ամբողջովին անտեսելն է: Ապա թէ ոչ ողորմութեան դուռը չի բացուիր եւ յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւնը մեր մէջ չի հոսիր: Ըստ Յիսուսի սորվեցուցածներուն առանց «Ես»-ը անտեսելու յաւիտենական կեանքի արժանանալ կարելի չէ: Այս տունին երրորդ տողը «Դասեցոյ վերնոցն» է: Հոս բացայայտ կ'ըմբռնենք անձին բարձր գիտակցութեան յափշտակւելու գաղափարը: Դարձեալ աղերսանք մըն է, որ դասաւորուինք, այսինքն արժանի ըլլանք աւելի բարձր գիտակցութեան մը, որ ամփոփուած է «վերնոցն» բառին մէջ:

Ե

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա

Վերեւ ներկայացուած առաջին տունին մէջ ինչպէս Աստուծոյ երրորդութիւնը նկարագրուած էր, այս տունին առաջին տողն ալ կը մատնանչէ այդ Երրորդութեան միականութիւնը: Այսինքն երեք ըլլալով հանդերձ Աստուած մէկ է: Հետեւաբար բոլոր ստեղծագործութիւնը, որ է Աստուծոյ արտայայտութիւնը, կը ներկայացնէ միականութիւնը: Երբ այս տողը կ'երգենք պէտք է հասկնալ թէ կարծեցեալ այն բոլոր զանազանութիւնները, որ ընդհանուր առմամբ կը հաւատանք իրարմէ անջատ եւ անկապակից ըլլալ, սակայն բոլորն ալ մէկ են եւ նոյն միականութեան զանազան արտայայտութիւնները: Այս տունին երկրորդ տողը կը յայտնէ, թէ Աստուած կը խնամէ բոլոր ստեղծագործութիւնը եւ երրորդ տողն ալ կը ներկայացնէ մեր

աղերսանքը՝ որպէս մաս ստեղծագործութեան, մեզ ալ ողորմի եւ իր խնամքէն չզրկէ: Հարկաւ պէտք է գիտնալ թէ Աստուծոյ խնամքը անընդհատ կը տեղայ բոլորին վրայ՝ թէ՛ բարիներուն, թէ՛ ալ չարերուն: Այս կէտը շատ բացայայտ շեշտուած է Աւետարանին մէջ: Բայց մարդն է, որ ինքզինք ընդունակ չ'ըներ Աստուծոյ շնորհներուն:

Չ

Չարթիր Տէր յօգնել,

Չարթոյ լլվթմրեալս,

Չուարթնոց նմանիլ:

Այս տունին երեք տողերն ալ մէկական աղերսանքներ են: Մեր ներկայ արթուն կոչած գիտակցութեան մակարդակն ալ իսկութեան մէջ տարբեր «երազի» մակարդակ մըն է եւ իսկական արթնութիւնը վերել յիշուած բարձր գիտակցութեան յափշտակուիլն է եւ Յիսուս Քրիստոսի նմանիլն է (Christ consciousness): Աղերսանքը Աստուծոյ օգնութիւնը խնդրելն է, որպէսզի յաջողինք Քրիստոս մեր մէջ յայտնաբերել: Երկրորդ տողը բացայայտ կ'ընէ, թէ մեր գիտակցութեան մակարդակը շատ ցած է, որով մեր ուղեղը թմրած է եւ կարող չենք այդ բարձր գիտակցութեան փորձառութիւնը ունենալ: Աղերսանքը այդ թմրութենէն՝ քունէն, երազէն արթննալու համար է: Այս տունին վերջին տողն ալ կը ներկայացնէ նման զարթօնքի մը հետեւանքը, այսինքն նմանիլ անոնց, որոնք արթնցած են այսինքն նմանած Յիսուս Քրիստոսի:



Է

Էդ Հայր անսկիզբն,

Էակից որդի,

Է միշտ Սուրբ Հոգի:

Անգամ մը եւս Ս. Ներսէս Շնորհալի Աստուծոյ երրորդութիւնը կը յիշեցնէ: Անձեր կան որոնք կ'ըսեն. «Մէկ Աստուած երեք անձիք»: Ըստ ինծի այս արտայայտութիւնը որոշ անձերու միտքին մէջ կրնայ սխալ ըմբռնում յառաջ բերել: Երեք զատ «անձ»-եր չկան, այլ մէկ Աստուծոյ երեք տարբեր երեւոյթները՝ արտայայտութիւնները: Առաջին տողը ակնարկութիւն մըն է Հայր Աստուծոյ, որ յաւիտենական է: Յաւիտենականութիւնը անվերջ ժամանակ չէ, այլ ժամանակի դրութենէ դուրս ըլլալն է: Ան որ յաւիտենական է ժամանակի ենթակայ չէ, ոչ սկիզբ ունի եւ ոչ ալ վերջ: Ահա աս է իմաստը «անսկիզբն»-ին: Երկրորդ տողը ակնարկութիւն մըն է Որդւոյն՝ Քրիստոսի: Հոս կարեւոր բառը Էակից բառն է, որուն իմաստը խոր է. համագոյ, համագոյութիւն, համանիւթել: Այս վերջինը կը վաւերացնէ ստեղծագործութեան Աստուծոյ նիւթեղէն արտայայտութիւնը՝ Որդին Քրիստոս ըլլալը: Որովհետեւ ամէն ինչ Աստուծոյ զօրութեամբ յառաջ եկած է: Աստուծոյ զօրութիւնը Ս. Հոգին է եւ այդ զօրութեան մարմնացումն ալ Քրիստոսն է:

Նաեւ պէտք է նշմարել թէ «է»-ն էական բային ներկայ ժամանակ երրորդ դէմքն է: Ասոր իմաստն ալ Աստուած ժամանակին ենթակայ չըլլալն է, որով Աստուծոյ համար անցեալ եւ ապագայ գոյութիւն չունին, Աստուած միայն ներկային մէջ է: Այս հիման վրայ ալ ներկան յաւիտենական է: Ուրեմն յաւիտենական կեանքն ալ պէտք է ներկային մէջ իրականանայ եւ ոչ մահէ ետք՝ դարեր վերջ:



Ը

Ընկալ զիս գթած,

Ընկալ ողորմած,

Ընկալ մարդասէր:

Այս համարն ալ աղերսանք մըն է Աստուծոյ, որպէսզի մեզ արժանի ընէ եւ ընդունի իբրեւ իր հաճելի որդիներէն մին: Միանգամայն Ս. Ներսէս կը մատնանշէ Աստուածային երեք գլխաւոր յատկութիւնները: Մարդ իր խաւարամտութեամբ չի կրնար Աստուծոյ հետ հաղորդակցիլ առանց Աստուծոյ օգնութեան: Աստուած գթասիրտ է եւ անընդհատ կը գթայ բոլորին վրայ: Մարդ ինքն է որ կը մերժէ Աստուծոյ գութը, հետեւաբար չի կրնար օգտուիլ այդ գութէն: Աստուած նաեւ ողորմած է եւ իր ողորմութիւնը կը տեղացնէ բոլորին վրայ անխտիր, թէ բարիին եւ թէ չարերուն վրայ: Աստուծոյ ողորմութիւնը Ս. Հոգիի զօրութիւնն է, Ս. Հոգիի շնորհներն է: Մարդ արարած իր խաւարամտութեամբ իր գործած եօթ մահացու մեղքերով կը խափանէ զօրութեան ներգործումը: Եօթ մահացու մեղքերուն իւրաքանչիւրը կը համապատասխանէ եօթ զօրութեան կեղրոններուն՝ խակրաներուն եւ արգելք կը հանդիսանայ խակրաներէն զօրութեան ներգործման: Աստուած նաեւ մարդասէր է: Եթէ Աստուած մարդասէր չ'ըլլար ոչ գթասիրտ կ'ըլլար եւ ոչ ալ ողորմած:



Թ

Թագաւոր փառաց,
Թողութեանց տըրող,
Թող ինձ ըզյանցանա:

Անտարակոյս, այս տողերը կը ներկայացնեն մեղքերու թողութեան աղերսանք մը: Անոնք, միանգամայն, Աստուծոյ երկու ուրիշ յատկութիւններն ալ կը ներկայացնեն: Աստուծոյ փառքը, Աստուծոյ Որդին Քրիստոսն է, ընդհանուր ստեղծագործութիւնն է եւ Հայր Աստուած ալ այդ փառքին թագաւորն է, քանի որ ան իր ստեղծագործութիւնն է: Երկրորդ տողը Հայր Աստուծոյ ներողամիտ ըլլալը կը մատնանշէ: Միթէ Աւետարանին մէջ ալ չէ՞ գրուած թէ Հայր Աստուծոյ եւ Որդին Աստուծոյ դէմ գործուած մեղքերը ներելի են: Հարկաւ մեղքերու թողութեան իրականացումը կախեալ է անհատին անկեղծութենէն եւ ճշմարիտ ապաշխարութենէն, ինչպէս կը տեսնենք «անառակ որդիի» առակին մէջ: Բայց պէտք չէ մոռնալ թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են: Այս մեղքերուն «պատիժը», աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել, այդ մեղքերուն յառաջ բերած հակազդեցութիւնները մարդ պարտ է ընդունիլ եւ ըստ այնմ ալ դասը սորվիլ ու իր կենցաղը փոխել: Իսկ եթէ անհատը իսկական ինքնափոփոխութիւն կը կերտէ եւ կատարելութեան ուղին կը զատէ, քան թէ եսասիրութեան կամ «Ես»-ապաշտութեան, Աստուած ալ իր ողորմածութեամբ կրնայ մեղմացնել այդ մեղքերուն յառաջ բերած կեանքի վատ պատահարները:



Ժ

Ժողովող բարեաց,
 Ժողովեա եւ զիս,
 Ժողովս անդրանկաց:

«Բարի»-ները անոնք են, որ կատարելութեան ուղիէն չեն շեղիր: Անոնց բոլոր խորհուրդ, խօսք ու արարքները կ'ըլլան ըստ Աստուծոյ կամքին, այսինքն Ս. Հոգիի տիեզերական օրէնքներուն հետ ներդաշնակ: Անոնք կ'արժանանան յաւիտենական կեանքի: Յաւիտենական կեանքը Աստուծոյ՝ Քրիստոսի հետ մէկ ըլլալ եւ Անոր մէջ լուծուիլն է: Այս հիման վրայ Ս. Ներսէս Աստուած կը ներկայացնէ որպէս բարիները ժողովող՝ հաւաքող: Երկրորդ տողը աղերսանք մըն է, որպէսզի Քրիստոս մեզի ալ արժանի նկատէ յաւիտենական կեանքի եւ ըստ երրորդ տողին անդրանիկներուն հետ դասաւորէ, այսինքն յաւիտենական կեանք շնորհէ: Անդրանիկներն, այսինքն առաջիններն անոնք են, որոնք մեզմէ առաջ յաւիտենական կեանք ստացած են: Մարդ իր կենցաղով եւ ապրելակերպով ինքզինք կրնայ արժանի ընել յաւիտենական կեանքի: Բայց, մարդ չի կրնար ինք իր ջանքերով յաւիտենական կեանքը ձեռք բերել: Ան Աստուծմէ տրուած շնորհք մըն է բոլոր անոնց, որոնք կը յաջողին իրենց կեանքի պարտականութիւնը լիովին կատարել: Մարդու աշխարհիկ կեանքին բուն պարտականութիւնն ալ Քրիստոս իր մէջ յայտնաբերելն է: Բարձր գիտակցութեան տէր ըլլալն է:



Ի

Ի քէն Տէր Հայցեմ,

Ի Մարդասիրէդ,

Ինձ բժշկութիւն:

Հոս անգամ մը եւս շեշտուած է Աստուծոյ մարդասէր ըլլալը: Անհատը մարդասէր Աստուծմէ կը խնդրէ բժշկութիւն: Անտարակոյս շատեր այդ բժշկութիւնը կը նկատեն իրենց ֆիզիքական հիւանդութիւններու բուժումը: Ընդհանուր առմամբ ֆիզիքական հիւանդութիւնները Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերուն հետեւանքներն են, հետեւաբար պէտք են «աններելի» ըլլալ: Մարմնի հիւանդութեան պատճառը Ս. Հոգիի զօրութեան հոսքին խափանման արդիւնքն է: Ինչպէս առաջուց գրուած է, եթէ անձը այդ հիւանդութենէն իր դասը սորված է Աստուած ալ կը մեղմացնէ անոր ազդեցութիւնը: Իսկ հոս յիշուած բժշկութիւնը, հոգեկան բժշկութեան մասին է: Երբ մարդուն կենցաղը չ'ընթանար կատարելութեան ուղիէն եւ ընդհանուր առմամբ եսասիրութեամբ կը գործէ, ինք արգելք կը հանդիսանայ Ս. Հոգիի զօրութեան ներգործման: Ժամանակի ընթացքին այդ զօրութեան պակասը պատճառ կ'ըլլայ որ մարմինը հիւանդանայ: Ֆիզիքական հիւանդութիւնները հետեւանք են հոգեկան հիւանդութեանց: Երբ Յիսուս հիւանդները կը բուժէր միթէ չէ՞ր ըսեր. «մեղքերդ ներուած են»: Երբ հիւանդ կին մը Յիսուսի քղանցքին դպաւ եւ բուժուեցաւ, Յիսուս զգաց իրմէ կնոջ փոխանցուած զօրութեան հոսքը եւ հարցուց թէ ո՞վ էր իրեն դաշողը: Շատեր Յիսուսին կը դաչէին բայց անոնց զօրութիւն չ'փոխանցուեցաւ, որովհետեւ անոնք ընդունակ «անօթ»-ներ չէին, իսկ կինը, հաւատաքով լի այդ զօրութեան ընդունակ «անօթ» մըն էր:

Լ

Լէր կեանք մեռելոյս,

Լոյս խաւարելոյս,

Լուծանող ցաւոյս:

Հոս «մեռեալը» մարմնային մահուան համար չէ ալլ մարդուն հոգեկան մահուան, այսինքն խաւարամրտութեան: Աղերսանքը անձին մէջ Քրիստոսի յայտնութեան համար է, որ իր յայտնութեամբ անոր պիտի պարգեւէ թէ՛ բարձր գիտակցութիւն վերջ տալով մարդուն խաւարամտութեան, թէ՛ ալ յաւիտենական կեանք շնորհէ: Ահա՛, աս է իմաստը «մեռեալիս կեանք եղիր՝ կեանք տուր»-ին: Երկրորդ տողն ալ բացայայտ կը շեշտէ գիտակցութեան մակարդակի բարձրացումը: Լոյսին փոխաբերական իմաստը գիտակցութիւնն է: Ինչպէս լոյսը ինք տեսանելի չէ, բայց ամէն ինչ տեսանելի կ'ընէ, նոյնպէս մարդուն գիտակցութեան ալը անյայտ է, բայց ան մարդը ամէն ինչի գիտակից կ'ընէ եւ յայտնուած մակարդակին համաձայն ալ հասկացողութիւն կու տայ: Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ կեանքը, Ես եմ աշխարհի լոյսը»: Իսկ երբ մարդուն գիտակցութեան մակարդակը բարձրանայ, այն ինչ որ ինք առաջուց ճշմարտութիւն կը կարծէր, իրեն յայտնի կ'ըլլայ թէ ան միայն պատրանք մը՝ երազ մըն էր: Ինք ճշմարտութիւնը կը տեսնէ Ան ինչ որ է, ամէն ինչի միականութիւնը: Մարդուն ցաւերը, տառապանքները ընդհանուր առմամբ իր խաւարամտութեամբ գործած մեղքերուն հետեւանքներն են: Ուրեմն, մարդուն ստացած բարձր գիտակցութիւնը վերջ կու տայ այդ խաւարամտութեան, հետեւաբար նաեւ գործուած մեղքերուն: Առանց մեղքի ալ բոլոր ցաւերուն պատճառները ինչպէս նաեւ ցաւերն ալ կը լուծուին՝ կ'անհետանան:

Խ

Խորհրդոց գիտող,

Խաւարիս շնորհեա,

Խորհուրդ լուսաւոր:

Առաջին տողը բացայայտ կ'ընէ թէ Աստուած ամենագէտ է: Աստուած ամէն մարդու խորհուրդները գիտէ: Այն գիտակցութիւնը, որ մարդը գիտակից կ'ընէ իր խորհուրդներուն, մարդուն մէջ յայտնուած Աստուծոյ գիտակցութիւնն է՝ մարդուն ուղեղին արտօնած մակարդակին համաձայն: Մարդ տակաւին չէ սորված իրեն տրուած ուղեղը պատշաճ կերպով օգտագործել եւ կը գոհանայ միայն անոր կարողութիւններուն 10%-ը օգտագործելով: Մարդուն միտքին մէջ ամէն խորհուրդ իր ուղեղին մէջի ելեկտրական հոսանքի մը արդիւնքն է: Ամէն ելեկտրատան հոսանք իր շուրջ մագնիսական ազդեցութեամբ կ'ընենայ որ կը ճառագայթէ դէպի եթեր: Այդ ճառագայթումը իր թրթռացումի յաճախականութեան եղանակաւորումով իր մէջ կը պարունակէ խորհուրդին մէջի տեղեկութիւնը: Ուրեմն զարմանք պէտք չէ պատճառէ թէ Աստուած գիտակից է մեր ամէն խորհուրդներուն: Եթէ իմ ճշմարիտ էութիւնս՝ Քրիստոսն է, որ իմ գիտակցութիւնս կու տայ, ինչպէս չի գիտնայ իմ գիտցածս եւ խորհածս: Երկրորդ տողը կը շեշտէ մարդկային խաւարամտութիւնը եւ այդ խաւարամտութեան հետեւանք ալ այն բոլոր ժխտական, եսասիրական եւ վատ խորհուրդները, որ անհատը կ'ընենայ: Երկրորդ տողին մէջ դարձեալ աղերսանք մը կայ շեշտուած «շնորհեա» բառով: Ի՞նչ է այդ աղերսանքը: Աղերսանքը ներկայացուած է երրորդ տողին մէջ եւ ան տենջանքն է, որպէսզի Աստուածոյ շնորհքը մեզի օգնէ ունենալ միայն աստուածահաճոյ խորհուրդներ: Այս գաղափարը շեշտուած է «լուսաւոր»

բառով: Ինչպէս առաջուց գրուած էր, «Լոյս»-ը փոխաբերաբար գիտակցութիւն կը ներկայացնէ: Հետեւաբար «Լուսաւոր խորհուրդները» կարելի կ'ըլլան երբ Աստուած մեզի կը շնորհէ բարձր գիտակցութիւն: Բարձր գիտակցութիւնը խաւարամտութիւնը կը փարատէ եւ մարդուն կու տայ կարողութիւնը ճշմարտութիւնը աւելի լաւ հասկնալու: Նման հասկացողութիւն ունեցող մարդու մը խորհուրդներն ալ ինքնաբերաբար կը փոխուին եւ կ'ըլլան աւելի «լուսաւոր»:

Ծ

Ծնունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ըստուերաւ,
Ծագեա լոյս փառաց:

Հօր ծոցէն ծնողը Հօր Որդին է, ուրեմն առաջին տողը ակնարկ մըն է Քրիստոսի: Դարձեալ աղերսանք մը, որպէսզի Քրիստոսի բարձր որակով Լոյսը նաեւ մեր մէջ ծագի: Որովհետեւ այդ Լոյսը Քրիստոսի Լոյսն է եւ Քրիստոս՝ Աստուծոյ Որդին, Աստուծոյ փառքն է, Շնորհալին այդ Լոյսը կը կոչէ «Լոյս փառաց»: Անգամ մը եւս շեշտելով թէ Քրիստոսի Լոյսը մեր մէջ մեր գիտակցութեան մակարդակն է: Այդ Լոյսին բարձր որակը մեր խաւարամտութեան եւ անոր ստեղծած ստուերին՝ «մթութեան» հետեւանք մեզմէ՝ մեր գիտակցութենէն ծածկուած է: Ահա՛, աս է իմաստը «Ծածկելոյս ստուերաւ»-ին: Ինչպէս համարներուն մեծամասնութեան, ասոնց բոլորն ալ Քրիստոսի մեր մէջ յայտնութեան աղերսանքներ են:



Կ

Կենարար փրկիչ,

Կեցո ըզմեռեալս,

Կանգնեա զգլորեալս:

Առաջին տողը անգամ մը եւս ակնարկ մըն է Քրիստոսի: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ կեանքը»: Մարդուն կեանքը իր հոգիին արդիւնքն է: Իր Հոգին, անձին մէջ, Քրիստոսի ներկայութիւնն է: Հետեւաբար Քրիստոս «կենարար» է՝ կեանք տուող է: Քրիստոսի մեր մէջ յայտնութեամբ մեր այս աշխարհիկ կեանքէն զատ, մենք նաեւ կրնանք արժանանալ յաւիտենական կեանքի: Անոնք որոնք կ'արժանանան յաւիտենական կեանքի միթէ փրկուած չե՞ն ըլլար: Վերելի առաջին տողը ակնարկ մըն է յաւիտենական կեանքի, հետեւաբար փրկութիւն պարգեւող Քրիստոսին: Մարդուն ներկայ վիճակը, բաղդատմամբ յաւիտենական կեանքի, հոգեկան մահուան ստուեր մըն է: Երկրորդ տողը դարձեալ աղերսանք մըն է, որպէսզի Քրիստոս մեզ արժանի ընէ «յաւելեալ» կեանքի, այսինքն յաւիտենական կեանքի: Ահա', աս է իմաստը «Կեցո զմեռեալս»-ին: Մարդուն այս անբաղձալի վիճակը արդիւնքն է իր հոգեկան անկումին, որ ներկայացուած է «զգլորեալս» բառով: Աղերսանքը այս անգամ Քրիստոսէն խնդրել է, որպէսզի մեզ այս անկումէն վեր բարձրացնէ՝ վերականգնեցնէ:





Հաստեա հաւատով,

Հաստատեա յուսով,

Հիմնեցո սիրով:

Մինչեւ հոս համարներուն մեծամասնութիւնը կը ներկայացնէին աղերսանք Քրիստոսի Լոյսին մեր մէջ յայտնուելուն: Ի՞նչպէս իրականացնել այդ յայտնութիւնը: Այս երեք տողերը բացայայտ կ'ընեն թէ մարդինչերու կարօտ է յաջողութեան համար: Այս անդրադարձը Շնորհալին կը մղէ Աստուծոյ խնդրել այդ յատկութիւնները: Առաջին տողը կը ներկայացնէ աղերսանք մը, որպէսզի Քրիստոս մեր մէջ զօրաւոր անխախտելի հաւատք մը արծարծէ: Առանց Աստուծոյ վրայ «բացարձակ» հաւատքի գոյութեան մարդ հոգեկան կեանքի մէջ մէկ քայլ անգամ չի կրնար յառաջանալ: Հաւատքը կը ներկայացնէ նաեւ սէր, վստահութիւն եւ պաշտամունք: Մեր կեանքի բոլոր լաւ ու վատ պատահարներուն համար պարտ ենք Աստուծոյ փառք տալ, որովհետեւ առանց վարանումի կը հաւատանք թէ բոլորն ալ Աստուծոյ կամքն են: Հաւատքը պարզապէս Աստուծոյ կը հաւատամ ըսել չէ, այլ ան Յիսուս Քրիստոսի բոլոր սորվեցուցածներուն հաւատալ, զանոնք սորվիլ, իւրացնել եւ կիրարկելն է: Մարդ շատ բան կ'ուզէ եւ կը փափաքի որ ուզածն ալ շուտով ստանայ: Հոգեկան կեանքի մէջ ամէն ինչ, ըստ մարդկային տեսանկիւնէ, շատ աւելի դանդաղ կ'ընթանայ: Աստուած յաճախ կը փորձէ անձը, ցոյց տալու համար անոր թերութիւնները, որպէսզի ան զանոնք շտկէ: Այս ուղղութեամբ մարդուն անհրաժեշտ է նաեւ համբերութիւն: Համբերութեան կ'ընկերակցի ապագայի յոյսը: Երկրորդ տողը աղերսանք մըն է որ անձը այդ յոյսին մէջ հաստատ մնայ եւ ամենեւին չյուսահատի, հոգ չէ

Թէ Քրիստոսի յայտնութիւնը իր մէջ կը թուի ուշանալ եւ շատ ուշանալ: Յոսահատութիւնը հաւատքի պակասէն յառաջ կու գայ: Հետեւաբար ան որ հաստատ չի մնար իր յոյսին մէջ, յայտնի կ'ընէ թէ ինք նաեւ հաստատ չէ իր հաւատքին մէջ: Երբորդ տողը յաջողութեան համար երբորդ անհրաժեշտ ազդակն է: Աս ալ սէրն է: Այս սէրը պարզապէս զգացական սէրը չէ, այլ Շնորհալիին ըսած սէրը Աստուածային սէրն է, ինչ-որ զգացական չէ: Աստուծոյ սէրը իր Որդին Քրիստոսն է: Անձը պէտք է հիմնուած՝ հաստատուած ըլլայ Քրիստոսի սիրոյն մէջ: Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞ ըսած. «Երկու տիրոջ չէք կրնար ծառայել»: Երբ անհատը տակաւին կապուած է իր «Ես»-ին եւ կ'ապրի ըստ այնմ, չի կրնար հաստատ կամ հիմնուած ըլլալ Քրիստոսի վրայ: Իսկ եթէ հաստատ չէ Քրիստոսի վրայ չի կրնար Քրիստոսի այդ սէրը ցոլացնել: Աստուած սէր է: Անձ մը որքան սէր կը յայտնաբերէ իր միջավայրին մէջ, նոյն-իսկ իր թշնամիին, ցոյց կու տայ անոր որքան մօտեցած ըլլալը եւ որքան հաստատուած ըլլալը Քրիստոսի մէջ: Միթէ Պօղոս առաքեալն ալ այս երեք յատկութիւնները չէ՞ չեշտած որպէս ամենակարեւորները. «Իսկ հիմա սա՛ երեքը կը մնան՝ հաւատքը, յոյսը, սէրը. բայց սէ՛րն է ասոնց մեծագոյնը»: Հաւատքը եւ յոյսը մարդկային մտային իմացականութեան՝ զատողութեան եւ դատողութեան արդիւնքներ են, բայց սէրը մարդուն իր Հոգիին՝ Քրիստոսի արտայայտութիւնն է: Ճիշտ ասոր համար սէրը գերագոյն է բաղդատմամբ հաւատքի եւ յոյսի: Առանց սիրոյ ոչ հաւատք եւ ոչ ալ յոյս գոյութիւն կրնան ունենալ:



Զ

Չայնիւս աղաչեմ,

Չեռօքս պաղատիմ,

Չիր բարեաց շնորհեա:

Այս տունին մեկնաբանութեան համար պատշաճ է սկսիլ երրորդ տողէն: Այս ալ աղերսանք մըն է առ Աստուած, որպէսզի Ան մեզի շնորհէ Իր բարիքները: Բայց, որպէսզի այս աղերսանքին պատասխանը դրական ըլլայ, պարտ ենք նկատի առնել առաջին երկու տողերը: Առաջին հերթին անոնք, մեր ձեռքերը վեր բարձրացուցած կամ իրար միացուցած, մեր բերանացի աղօթքներուն ակնարկութիւններ ըլլալ կը թուին: Աղաչանքը պարզապէս «տուր» կամ «կ'ուզեմ» ըսել չէ, այլ գործնականօրէն ցոյց տալ է: Հետեւաբար առաջին տողը ակնարկութիւն մըն է մարդուն ըսած խօսքերուն: Մեր խօսքերը պարտ են միայն բարի խօսքեր ըլլալ: Առաջուց նաեւ ներկայացուած էր («Ո՛ր»-ի տակ) մարդու խորհուրդներուն «լուսաւոր խորհուրդ»-ներ ըլլալը: Պէտք չէ մոռնալ թէ բոլոր խօսքերը եւ արարքները նախ կը ծագին իբրեւ խորհուրդներ: Հետեւաբար անոնք որ «լուսաւոր խորհուրդ»-ներ ունին կ'ունենան նաեւ «լուսաւոր»՝ բարի խօսքեր: Երբ մեր խօսքերը «լուսաւոր» են, մենք ալ մեր ձայնով աղաչած կ'ըլլանք: Շնորհալիին գրած «ձայնիւս աղաչեմք»-ը պարզապէս «բերնի ծամոց» խնդրելը չէ: Իսկ «ձեռօքս պաղատիմք»-ն ալ մեր գործերուն բոլորին բարի ըլլալուն ակնարկութիւնն է: Ինչե՞ր են բարի գործերը: Անոնք են. կարեկից ըլլալ, միշտ օգնող, բնաւ վնաս չհասցնել որեւէ բանի՝ բոյսի, անասունի կամ ոեւէ անհատի եւ ամէն արարք կատարել բացարձակ սէրով:

Ղ


Ղամբարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո:

Առաջին տողը դարձեալ ակնարկութիւն մըն է Քրիստոսին, որ Լոյսի ակն է: Այս տողին մէջ Շնորհալին «ղամբարամբ»՝ լամբար բառը փոխաբերաբար օգտագործած է որպէսզի մատնանշէ Քրիստոսին Լոյսին ակը ըլլալը: Միթէ Ֆիզիքական աշխարհի վրայ ալ լամբարը լոյսին ակը չէ՞: Ինչպէս առաջուց գրուած էր, պէտք չէ մոռնալ, թէ Լոյսն ալ փոխաբերաբար կը ներկայացնէ մարդուն գիտակցութեան մակարդակը: Մարդ, ընդհանուր առմամբ փարած իր «Ես»-ին, իր կեանքին դեկը տուած է անոր: «Ես»-ը միայն ինքզինք կը խորհի եւ չ'ուզեր տեսնել «մեծ պատկերը»: Եսասիրութեամբ կառավարուած կեանքն ալ լի է բազմաթիւ անբաղձալի եւ վատ պատահարներով: Երբ անձը կը յաջողի ինքզինք ձերբազատել իր «Ես»-էն եւ յարիլ ու փարիլ իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի, իր կեանքին սանձերն ալ տուած կ'ըլլայ Անոր: Շնորհալին կը շեշտէ Քրիստոսի ճարտար ղեկավար մը ըլլալը: Նման անձի մը կեանքը կ'ընթանայ Աստուծոյ կամքին համաձայն եւ անձն ալ բնաւ վատ պատահարներու կամ խոչնդոտներու չի հանդպիր: Երրորդ տողը աղերսանք մըն է, որպէսզի Աստուած մեզ զօրացնէ, վախը մեր մէջէն անհետացնէ: Կատարելութեան ուղին լի է խոչնդոտներով: Շատեր անոնց ազդեցութիւններէն վախնալով կը վարանին այդ ուղին հետապնդելէ: Այս աղերսանքը Աստուծմէ կը խնդրէ այդ վախը անհետացնել եւ զօրութիւն՝ զօրաւոր կամք տալ: Ահա՛, աս է իմաստը «ամրացո»-ին: Իսկ «ղօղեալ»-ը վախկոտն է, որ իր վախէն կը թմրի:



Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցոյց,
Ճեպել 'ի յերկինս:

Առաջին տողը ակնարկութիւն մըն է Քրիստոսի, զայն կոչելով «փառքի ճառագայթ»: Երկրորդ տողը խնդրանք մըն է, որպէսզի Քրիստոս մեզ առաջնորդէ, մեզի ցոյց տայ ճամբան՝ միջոցը «երկինք» հասնելու: Երկինք հասնիլը հարկաւ փոխաբերական է եւ անոր բուն իմաստը Քրիստոսի մեր մէջ յայտնութիւնն է: Թէ՛ երկինքը, թէ՛ ալ դժոխքը, երկուքն ալ հո՛ս, աշխարհի վրայ են: Երկուքն ալ մեր ներսն են: Երբ մարդուն անհատականութիւնը կը յարի եւ կը փարի իր «Ես»-ին, ինք արդէն դժոխքի դռնէն մտած կ'ըլլայ: Իսկ, երբ ան կ'անտեսէ իր «Ես»-ը եւ կը յարի եւ կը փարի իր ներքին Քրիստոսին, ինք ալ «երկինք»-ին դռնէն ներս մտած կ'ըլլայ: Երրորդ տողը բացայայտ կ'ընէ թէ ինչ է Քրիստոսի ցոյց տալիք ճամբուն նպատակը: Այդ ճամբան մեզ դէպի «երկինք» կը տանի եւ խնդրանքն ալ հոն աճապարանքով՝ չուտով հասնիլն է: Խնդրանքը Քրիստոսի մեր մէջ յայտնութեան չուտով՝ «ճեպել», ըլլալն է: Այդ յայտնութիւնը մենք չենք կրնար մեր ձեռքով իրականացնել, ան Աստուծոյ շնորհքն է եւ կը պատահի ըստ Աստուծոյ կամքին եւ ընտրած ժամանակին: Բայց անձին աճապարանքը միանգամայն ցոյց կու տայ իր տենջանքին որակը:



Մ

Միածինդ Հօր,

Մոյծ զիս յառագաստ,

Մաքուր Հարսանեաց:

Հօր Աստուծոյ միածին Որդին Քրիստոսն է, հետեւաբար առաջին տողը ցոյց կու տայ, թէ անգամ մը եւս մեր խնդրանքը Քրիստոսի է որ կ'ընենք: Հոս, Շնորհալին շատ հետաքրքրական փոխաբերութիւն մը օգտագործած է: Մարդուն նպատակը Քրիստոս իր մէջ յայտնաբերելն է, այսինքն Քրիստոսին միանալ եւ Անոր հետ մէկ ըլլալն է: Ճիշդ ասոր համար շատ մը երգերուն մէջ կը տեսնենք «փեսայ»-ի եւ «հարսանիք»-ի գաղափարները: «Առագաստ»-ը, հարսանիքէն վերջ հարսին ու փեսային միանալու ժամանակն է: Մենք ալ իբրեւ Քրիստոսի հարսերը տենջանքը ունինք իրեն միանալու իր հետ մէկ ըլլալու: Միանգամայն այս հարսանիքը եւ միացումը «մաքուր» է, որովհետեւ ան երկու անձերու սեռային միութիւնը չէ, այլ մարդուն Աստուծոյ մէջ լուծուիլն է:

Յ



Յորժամ գաս փառօք,

Յահագին աւուրն,

Յիշեայ զիս, Քրիստոս:

Առաջին տողը կը թուի ակնարկութիւն մը ըլլալ Երկրորդ գալուստի: Շատեր կը կարծեն թէ Երկրորդ գալուստը պիտի ըլլայ «աշխարհին վերջը» երբ Աստուծոյ թագաւորութիւնը գայ, այն ատեն բարիները յարութիւն պիտի առնեն: Անտարակոյս նման հասկացողութիւն մը հիմնուած է Աւետարանի մէջ գրուած որոշ

Համարներուն վրայ: Բայց հոն նաեւ գրուած է թէ Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսդին է եւ դուրսէն երեւցած բաներով չի գար: Ալ աւելի կարեւոր Յիսուս Քրիստոսի ըսած մէկ խօսքը կայ, որ այդ վերեւ ներկայացուած Հասկացողութեան սխալ ըլլալը կը փաստէ: Ան ըսած է. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. «Հոս ներկայ եղողներէն կան ոմանք՝ որ մահ պիտի չհամտեսնեն, մինչեւ որ տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը՝ զօրութեամբ եկած»» (Մարկոս Ը: 39): Շատ լաւ գիտենք թէ երկու հազար տարի առաջ հոն գտնուողներուն բոլորն ալ այսօր մեռած են, հետեւաբար Աստուծոյ թագաւորութեան գալուստը արդէն պատահած ըլլալու է: Ճշմարտութիւնը այն է թէ այդ գալուստը անհատական է եւ ոչ հանրային: Յիսուսի ակնարկութիւնը Ստեփաննոս նախասարկաւագին համար էր, որ երբ կը քարկոծուէր, իր մահէն առաջ երկինքը բացուեցաւ եւ Աստուծոյ թագաւորութիւնը տեսաւ: Մարդուն մահուան օրը կը ներկայացնէ այդ «ահագին»՝ ահռելի օրը, վախազդու օրը, որովհետեւ մարդ ընդհանուր առմամբ մահէն կը վախնայ: Մարդուն հոգին Քրիստոսի ներկայութիւնն է: Մահուան ժամուն երբ հոգին մարմինէն կը բաժնուի, մարմինը ինչպէս նաեւ մարդուն անհատականութիւնը կը մեռնին, կ'երթան: Այս համարին մէջ աղերսանքը այն է, որ Քրիստոս յիշէ անձը եւ անոր անհատականութեան յարութիւն պարգեւէ եւ անձն ալ իր մարմնին մահէն վերջ միանայ Քրիստոսի եւ լուծուի Անոր մէջ:



Ն

Նորոգող Հուլիսեանց,

Նորոգեա եւ զիս,

Նորոգ զարդարեա:

Քրիստոսի յայտնութիւնը անձին մէջ պատճառ կ'ըլլայ ընդհանուր փոփոխութեան: Այս փոփոխութիւնը անձին մէջ նորոգութիւն մըն է, որ տեղի կ'ունենայ: Հետեւաբար այս տունին մէջ Քրիստոս ներկայացուած է իբրեւ «նորոգող»: Նորոգել կը նշանակէ հինը նետել եւ անոր տեղ նորը դնել: Կոտորած թափած բան մը շտկել եւ ամրացնել: Այս տունին մէջ «հին մարդ»-ուն տեղ «նոր մարդ»-ը «ստեղծել» կը ներկայացնէ այդ նորոգութիւնը: Երկրորդ տողը աղերսանք մըն է, որպէսզի Քրիստոս մեզ ալ փոխէ եւ «նորոգէ», որպէսզի հին «զարդերուն» տեղ նոր «զարդերով» զարդարուինք: Զարդերով զարդարուիլը չեշտուած է երրորդ տողին մէջ: Ինչե՞ր են այս զարդերը, որոնք մարդը պիտի նորոգեն: Մարդուն մէջ ի՞նչ բաներ պէտք է փոխուին: Անտարակոյս, այդ նորոգութիւնները՝ փոփոխութիւնները կը վերաբերին մարդուն բնոյթին, անոր խորհուրդներուն, անոր խօսքերուն եւ անոր արարքներուն: Ընդհանուր առմամբ մարդ փարած իր «Ես»-ին կը կերտէ եսասէր բնոյթ մը: Նոյնիսկ երբ ան կը ճօճի իր անասնական եւ մարդկային բնոյթներուն միջեւ չի կրնար ինքզինք ձերբազատել իր «Ես»-էն: Ամենամեծ փոփոխութիւնը անհատին իր կեանքի սանձերը իր «Ես»-էն առնել եւ իր ներքին Քրիստոսի տալն է: Նման անձ մը կատարելութեան ուղին կը զատէ եւ անկէ չի շեղիր եւ իր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան ըստ Աստուծոյ կամքին:



Շնորհատու բարեաց,
 Շնորհեա պաւութիւն,
 Շնորհեա վթողութիւն:

Շնորհալին առաջին տողին մէջ, Աստուած կը ներկայացնէ որպէս բարիքներ շնորհող: Յաջորդ երկու տողերը աղերսանք են: Աստուծմէ կը խնդրենք որպէսզի Ան մեզի շնորհէ մեղքերու քաւութիւն եւ թողութիւն: Շատեր կը կարծեն, թէ նման աղերսանքով Աստուած իրենց բոլոր մեղքերը կը ներէ: Պարտ ենք նկատողութեան առնել Յիսուս Քրիստոսի հետեւեալ խօսքը. «Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»: Այս ուղղութեամբ Յիսուս «անառակ Որդի»-ի առակով մեզի լաւագոյնս սորվեցուց: Հայր Աստուած Իր դէմ գործուած մեղքին համար ներողամիտ է, թէ՛ քաւութիւն եւ թէ՛ թողութիւն կը շնորհէ: Ի՞նչ է Հայր Աստուծոյ դէմ գործուած մեղքը: Ատիկա Հօր ժառանգը վատնելն է: Ի՞նչ է Հօրմէ մեզի ինկած ժառանգը: Այդ ժառանգը մեզի տրուած աշխարհիկ կեանքն է: Եթէ մենք այս կեանքի ընթացքին չյաջողինք կեանքին բուն նպատակը իրականացնել, անառակ որդիին նման վատնած կ'ըլլանք այդ ժառանգը: Բայց Հայր Աստուած ներողամիտ է եւ մեզ ետ կ'ընդունի: Որդիին դէմ գործուած մեղքն ալ ներելի է: Որդին՝ Քրիստոս մեր ճշմարիտ էութիւնն է, բայց երբ մենք Զինք կ'անտեսենք եւ կը փարինք մեր «Ես»-ին մեղանչած կ'ըլլանք Որդւոյն դէմ: Բայց երբ անդրադառնանք մեր սխալին եւ մենք զմեզ ձերբազատենք մեր «Ես»-էն եւ յարինք դէպի մեր ներքին Քրիստոս, Որդին ալ, որ ներողամիտ է, կը ներէ: Անառակ որդին ալ նոյնը չըրա՞ւ: Հեզ եւ խոնարհ իր Հօր ներկայացաւ՝ առանց հպարտութեան: Հօր եւ Որդւոյն դէմ գործուած մեղքերը ներելի են:

Ո

Ուրախացո, Տէր,
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ՝ ի սուգ:

Շատ հետաքրքրական տուն մը: Առաջին տողը պարզ է. Աստուծո՛վ խնդրանք մըն է: Կը խնդրուի մեզ ուրախացնել: Ինչո՞ւ ուրախացնէ: Ըստ երրորդ տողին սգաւոր ենք, հետեւաբար տխուր: Ինչո՞ւ սգաւոր ենք: Մարդ սգաւոր է որովհետեւ իր ոգին չէ փրկուած: Բայց ի՞նչ է մարդուն ոգին: Մարդուն ոգին իր մէջի հոգին է , որ մարդուն կողմէ դրուած տեղեկութիւններ կը պարունակէ: Մարդուն հոգին Քրիստոսի ներկայութիւնն է: Հետեւաբար մարդուն հոգին-ոգին անմահ են: Ուրեմն ի՞նչ է այդ փրկութիւնը, որուն մասին Շնորհալին գրած է: Մարդուն ոգին երբ աշխարհի վրայ կը վերամարմնանայ անձը կ'ենթարկուի այդ տեղեկութիւններուն յառաջ բերած պատահարներուն: Այն բոլոր «հունտերը, որ անհատը ցանած է» անցեալ կեանքերու ընթացքին, ան կը սկսի «հնձել այդ հունտերուն յառաջ բերած պտուղները»: Երբ անձը համբերութեամբ կ'ընդունի իր կեանքի բոլոր պատահարները՝ թէ՛ լաւերը, թէ՛ ալ վատերը իբրեւ Աստուծոյ կամքը եւ չի դժգոհիր, կը «վճարէ իր պարտքերը» եւ երբ այլեւս վատ հունտեր ալ չի ցաներ, այսպէսով ինք կը բարձրացնէ իր զօրութեան մարմնի թրթռացումի յաճախականութիւնը: Աս ալ կ'ըլլայ իր ոգիին փրկութիւնը, որ է Քրիստոսի հետ մէկ ըլլալ, այլեւս պէտք չունենար վերամարմնանալու:



Չ

Չար մշակողին,

Չար սերմանաց նորին,

Չորացոյ զպտուղ:

Չար մշակողը, անտարակոյս, անձին «Ես»-ը՝ սատանան է: Չար մշակը կը սերմանէ միայն «չար» հունտեր: Ինչե՞ր են այդ չար հունտերը: Անոնք բոլորն ալ չար եւ վատ, ինչպէս նաեւ, եսասէր խորհուրդներն են, որոնք յառաջիկային (որպէս պտուղ) ծնունդ կու տան չար եւ վատ խօսքերու եւ արարքներու: Ինչպէ՞ս ծնունդ կ'առնեն այս հունտերը: Անոնք բոլորն ալ ծագում կ'առնեն եսասիրութենէ եւ մարդուն անասնական բնոյթէն: Մարդու «Ես»-ը եւ իր անասնական բնոյթը մարդուն կու տան խաբեբայութիւն, ստախօսութիւն, նենգութիւն, ագահութիւն, բարկութիւն, կռուազանութիւն, հպարտութիւն ինչպէս նաեւ եօթ մահացու մեղքերէն մնացեալները: Խորհուրդները մարդուն մէջ մտային գործառնութիւն են: Կը թուի թէ մարդ որեւէ իշխանութիւն չունի իր մտքին վրայ, քանի որ առանց իր զատողութեան խորհուրդներ կու գան ու կ'երթան: Ճշմարտութիւնը այն է թէ առանց մարդուն գիտակցութեան միտքը եւ անոր յառաջ բերած խորհուրդները կը կառավարուին իր ենթագիտակցութեան մէջի տուեալներէն, որոնք կը ներկայացնեն իր բնոյթը: Երբ այդ տեղեկութիւնը հոն մարդուն «Ես»-ը դրած է, մարդուն միտքն ալ կը ծառայէ իր «Ես»-ին: Նախ քան անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնը, անձը պարտ է ինքզինք ձերբազատէ իր «Ես»-էն եւ փոխէ իր բնոյթը՝ անպէտ եւ վնասակար ազդակները եւ յատկութիւնները անհետացնէ, անոնց տեղ առաքինութիւններ տեղաւորէ: Այս պարագային չար հունտերը պտղաբեր չեն կրնար ըլլալ:

Պ

Պարգեւիչ բարեաց,

Պարգեւեա իմաց,

Պարտեաց թողութիւն:

Առաջին տողը անգամ մը եւս կը շեշտէ Աստուծոյ մեզի միայն բարիք տալը: Աստուած սէր է եւ չի պատժեր: Երկրորդ եւ երրորդ տողերը աղերսանք կը ներկայացնեն: Աստուծմէ կը խնդրուի մեր պարտքերուն թողութեան պարգեւը: Ինչե՞ր են այդ պարտքերը, որոնց համար թողութիւն կը խնդրենք: Մարդուն ոգին իր մէջ տեղեկութիւն կը պարունակէ նախորդ կեանքերէն մնացած: Պարտքերն ալ նախորդ կեանքերէ մնացած են: Ոգին կը վերամարմնանայ որպէսզի այդ պարտքերը «վճարէ» եւ անոնցմէ ազատի, որպէսզի ապագային չստիպուի անգամ մը եւս վերամարմնանալ: Բայց դժբախտաբար ան այդ պարտքերը կը «վճարէ», սակայն նոր պարտքերու տէր կ'ըլլայ եւ «անիւր կը թուի անընդհատ դառնալ»: Այն ինչ որ իբրեւ Տէրունական աղօթք կ'ըսենք, հոն ալ շեշտուած է. «ներէ մեր պարտքերը ինչպէս մենք կը ներենք մեզի պարտականներուն»: Ասոր իմաստը նոր պարտքեր չչինելն է եւ մեր կեանքի բոլոր պատահարները ընդունիլ եւ բոլորին համար փառք տալն է: Լաւերը վայելել իբրեւ Աստուծոյ բարիքները եւ վատերն ալ ընդունիլ իբրեւ դաւ եւ անոնց մէջ թաքնուած դասերը սորվիլ ու չկրկնել: Պարտքերը Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերն են, որ աններելի են: Ուրեմն այդ պարտքերէն ազատելու համար, Աստուծմէ մեր խնդրանքը պէտք է ըլլայ ընդունակութիւն բոլոր պատահարներուն համար, համբերութիւն եւ հաւատք: Ընդունիլ ամէն վատ կացութիւն իբրեւ Աստուծոյ կամքը: Եթէ մենք մեր դասը սորված ենք, անոնք ալ կը վերջանան:

Ջ

Ջուր շնորհեա աչացս,
Ջերմ հեղուկ զարտօսուր,
Ջրնջել զյանցանս:

Ինչպէս նախորդ համարին մեկնաբանութեան մէջ գրուած է մարդուն պարտքերը իր Ս. Հոգիին դէմ գործած մեղքերն են: Մարդ այդ մեղքերուն յառաջ բերած կեանքի պայմանները եւ պատահարները պարտ է կրել եւ հանդուրժել: Որպէսզի նոր պարտքեր՝ մեղքեր չգործէ եւ ապագային ալ նման կացութիւններու չենթարկուի պարտ է որ ինք ապաշխարէ եւ իր բնոյթը փոխէ: Այս համարը կը ներկայացնէ մարդուն ճշմարիտ ապաշխարութիւնը: Առաջին երկու տողերը կը ներկայացնեն այդ ապաշխարութիւնը: Անտարակոյս, մարդ ինք պէտք է ապաշխարէ: Բայց մարդ ինչո՞ւ կ'ապաշխարէ: Մարդ կ'ապաշխարէ, որովհետեւ անդրադարձած է մեղաւոր մը ըլլալուն: Իսկ ի՞նչ է ապաշխարութիւնը: «Ապ» նախադաս մասնիկը բառի մը հակառակ իմաստը կու տայ: Հետեւաբար, (ապ)աշխարել աշխար(հ)ելուն հակառակն է: Այսինքն աշխարհիկ շլացուցիչ հետապնդումներէ, ինչպէս նաեւ «Ես»-էն ձերբազատուիլ: Երբ անձը այս որոշումը կ'առնէ, իր ներքին Քրիստոս այս փոփոխութիւնը իր մէջ կը դիւրացնէ: Այս է իմաստը առաջին տողին՝ «աչքերուս ջուր (արցունք) տուր»: Երկրորդ տողը. «որպէսզի ջերմօրէն եւ առատապէս լամ»: Այս ապաշխարութիւնն ալ մարդը իր գործելիք մեղքերէն կ'ազատէ: Միթէ չ'ենք ըսեր. «Աստուծոյ տրուած ամենաթանկագինն ունէրը ճշմարիտ ապաշխարութեան կաթիլ մը արցունքն է»:

Ռ

Ռեաիւնդ քաղցու,
Ռամ Հոգւոյս արբո,
Ռաւ ցոյց ինձ լուսոյ:

Առաջին տողը ակնարկութիւն մըն է Ս. Հոգիի: Ան Հայր Աստուծոյ բղխած քաղցր զօրութիւնն է: Երկրորդ տողը աղերսանք մըն է, որ այդ քաղցր «Հիւթ»-ը մեր խեղճ, տկար, պարզ Հոգիին խմցնէ, այսինքն Ս. Հոգիի զօրութիւնը մեր մէջ հոսի: Աստուած մեզ Ս. Հոգիի զօրութեան ընդունակ անօթներ ընէ: Երրորդ տողը կը շեշտէ նպատակը: Երբ Ս. Հոգիի զօրութիւնը առատօրէն կը ներգործէ անձին մէջ, անոր կու տայ աւելի բարձր գիտակցութեան մակարդակ: Անձն ալ բարձր գիտակցութեան հետեւանք ճշմարտութիւնը աւելի լաւ կ'ըմբռնէ՝ կը հասկնայ: Ուրեմն այդ յաւելեալ գիտակցութիւնը մարդուն ցոյց կու տայ «Լոյս»-ը գտնելու ճամբան: Անտարակոյս, «Լոյս»-ը անձին մէջ Քրիստոսի ներկայութիւնն է:

Ընդհանուր ստեղծագործութիւնը Ս. Հոգիի զօրութեամբ յառաջ եկած է: Ընդհանուր ստեղծագործութիւնը այդ զօրութեան նիւթեղէն արտայայտութիւնն է, որ Քրիստոսի ներկայութիւնն է: Հետեւաբար, «Լոյս»-ը գտնելու ճամբուն մէջ յաջողիլ կը նշանակէ Քրիստոս գտնել: Երբ անձը իր ներքին Քրիստոսի հետ կը հաղորդուի, ամէն ինչի միականութիւնը կը «տեսնէ»: Այն ատեն անհատը կը հասկնայ ճշմարիտ Աստուծաշատութեան իմաստը՝ սիրել, խնամել ամէն ինչ՝ նիւթ, բոյս, անասուն եւ ամէն մարդ:



Ս

Սէր անուն Յիսուս,

Սիրով քով ճրմէա,

Սիրա իմ քարեղէն:

Յիսուս իր մէջ Քրիստոսը լրիւ յայտնաբերած ըլլալով, ունէր նաեւ Աստուածային բնոյթ: Միթէ Աստուած սէր չէ՞: Միթէ Քրիստոս Աստուծոյ Որդին սէր չէ՞: Հետեւաբար զարմանք պէտք չէ պատճառէ թէ Յիսուսի անունը սէր կը ներկայացնէ: Միթէ Յիսուս իր աշխարհիկ կեանքի ընթացքին միշտ սէր ցոյց չտուա՞ւ: Ան թէ՛ հիւանդները բուժեց, թէ՛ ալ իր կենցաղով մեզի ցոյց տուաւ կատարելութեան ուղին: Մարդ ընդհանրապէս փարած իր «Ես»-ին, կը գործէ ըստ անոր կամքին: «Ես»-էն ծագում առած բոլոր զգացումները, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան եսասէր: Եսասէր զգացումներուն ահլը «քարեղէն» սիրտն է: Հարկաւ հոս սիրտ ըսելով պէտք չէ հասկնանք մարդուն այն գործարանը որ արիւնը կը շրջէ, այլ մարդուն միտքին այն մասը որ մարդուն զգացումները կու տայ: Երբ անհատը կ'անտեսէ իր «Ես»-ը եւ կը կարողանայ ինքզինք անկէ ձերբազատել, Քրիստոս որ անհատին ճշմարիտ էութիւնն է, իր սէրը կը հոսեցնէ անձին մէջ եւ մարդուն բոլոր զգացումներն ալ կ'ըլլան նուրբ, բարի եւ ազնիւ: Ահա՛, աս է իմաստը սէրով սիրտը ճմլելուն: Ինչպէս մայր մը խմորը կը ճմլէ եւ վերջապէս ալիւրը կը փոխուի հացի եւ սէրով լի իր զաւկին կը կերցնէ, նմանապէս Քրիստոս ալ մեր «քարեղէն սիրտը» կը ճմլէ եւ մարդը կը փոխէ գեղեցիկ եւ ազնիւ ու բարի մարդու մը, որ միայն Աստուածային յատկութիւնները կը ցոլացնէ:

Վ

Վասն գթութեան,

Վասն ողորմութեան,

Վերստին կեցո:

Ինչպէս նախորդ տուներուն մէջ, Շնորհալին առաջին երկու տողերով անգամ մը եւս կ'ակնարկէ Աստուծոյ գթասրտութեան եւ ողորմածութեան: Երրորդ տողը դարձեալ աղերսանք մըն է: Աղերսանքը վերստին կեանք ունենալու մասին է: Անտարակոյս, աղերսանքը ընողը այս աշխարհի վրայ ապրող մէկն է: Հետեւաբար, «վերստին կեանքը» վերամարմնացումի ու աշխարհիկ կեանքի ակնարկութիւն մը չէ: Ուրեմն ակնարկութիւնը պէտք է ըլլայ յաւիտենական կեանքի համար: Բայց երբ նկատողութեան առնենք «վերստին» բառը, պէտք է հասկնանք թէ մարդ առաջուց յաւիտենական կեանքը ապրած պէտք է ըլլայ: Ամէն անհատ Քրիստոսի մէկական արտայայտութիւններն են, հետեւաբար բոլորս ալ յաւիտենական կեանքէն ծագում առած եւ աշխարհ եկած ենք: Ինչպէս արթուն մարդ մը գիշերը անկողինին մէջ կը քնանայ եւ քունի ընթացքին ալ երազ կը տեսնէ եւ երազին վերջ կու տայ կամ խորունկ քունի մտնելով կամ ալ արթննալով, նմանապէս մեր այս արթուն կոչած կեանքն ալ երազ մըն է եւ «վերստին կեանքը» այդ երազէն արթննալն է: Իսկ եթէ երազը խորունկ քունով վերջ գտնէ, մենք զայն մահ կը կոչենք եւ Աստուած առիթը կու տայ անգամ մը եւս երազելու: Ուրեմն աղերսանքը այն է, որ Աստուած մեզ արժանի ընէ վերադառնալ ուրկէ որ եկած ենք, Քրիստոսի մէջ լուծուիլ եւ մէկ ըլլալ:



S

Տենչալոյդ տեսեամբ,

Տուր ինձ յագենալ,

Տէր Յիսուս Քրիստոս:

Աղերսանք մը եւս, որպէսզի Աստուած յագեցնէ անհատին Քրիստոս տեսնելու տենչանքը: Անհատը կարող կ'ըլլայ Քրիստոս տեսնել միայն երբ Քրիստոս կը յայտնուի իր մէջ: Բայց ի՞նչպէս յաջողիլ այս ուղղութեամբ: Յիսուս Քրիստոս հիանալի կերպով մեզի սորվեցուց մեր կեանքին նպատակը ինչպէս նաեւ այդ նպատակը իրականացնելու միջոցները: Յիսուս իր կեանքով՝ օրինակ ըլլալով մեզի սորվեցուց մեր կեանքին նպատակը ու ըսաւ. «աշակերտը պէտք է ուսուցիչին պէս ըլլայ»: Յիսուս նաեւ լերան քարոզով մեզի սորվեցուց յաջողելու համար անհրաժեշտ ազդակները: Հոս պարզապէս պատշաճ է յիշեցնել Յիսուսի լերան քարոզէն միայն մէկ նախադասութիւն. «Անոնք որոնք սուրբ են սրտիւ, Աստուած կը տեսնեն»: Անտարակոյս ասոր կ'ընկերակցի նաեւ անընդհատ աղօթքը: Այս ուղղութեամբ, լերան քարոզին եւ այն ինչ որ «Տէրունական աղօթք» կը կոչենք անոնց մեկնաբանութիւնները աւելի ընդարձակօրէն ներկայացուած է «ԵՍ ԵՄ» գիրքիս վերջաբանին մէջ:

Բ

Բաբունդ երկնա՛ւոր,

Բոտեա զաշակերտս,

Բամից երկնայնոց:

Անկարելի է այս հանգրուանին չյիշել Յիսուսի խօսքը. «դուք ձեզ վարտապետ մի կոչէք եւ ոեւէ մէկուն ալ վարդապետ մի կոչէք, ձեր վարդապետը

Քրիստոսն է»։ Ուրեմն մեր երկնաւոր «բաբուն»-ը՝ վարդապետը՝ ուսուցիչը Քրիստոսն է։ Քրիստոս մեր ներսդին է։ Երբ մենք զմեզ սորվելու կը պատրաստենք, Քրիստոս ալ մեզի պատշաճ հասկացողութիւնը կու տայ, ապա թէ ոչ, կարեւորութիւն հունի, թէ ինչ քարոզներ, ինչ դասախօսութիւններ մտիկ կ'ընենք կամ ինչ գիրքեր կը կարդանք, կը հասկնանք միայն անոնց բառացի իմաստները եւ ոչ անոնց մէջ թաքնուած իմաստասիրութիւնները։ Շատ կարեւոր է բաց միտք մը ունենալ, քան թէ մեր միտքերը կալանաւորենք անպէտ եւ սուտ հաւատալիքներով։ Երկրորդ տողը թէ՛ աղերսանք մըն է եւ թէ՛ ալ յայտարարութիւն մը։ Յայտարարութիւնը ան է թէ մենք զմեզ Քրիստոսի աշակերտը կը համարենք։ Իսկ եթէ Քրիստոսի աշակերտն ենք, վերեւ Յիսուսի ըսածին համաձայն, պէտք է ջանք չխնայել մինչեւ որ Իրեն նմանինք, այսինքն Քրիստոս մեր մէջ յայտնուի։ Որովհետեւ Քրիստոսի անձին մէջ յայտնութիւնը Աստուծոյ է եւ մարդ իր անձնական ջանքերով չի կրնար զայն իրականացնել, աղերսանքը Քրիստոսէ խնդրել է որ մեզ առաջնորդէ դէպի այդ յայտնութեան։ Այս աղերսանքը կը կայանայ «բոտեա» բառին վրայ։ Երրորդ տունը արդիւնքն է Քրիստոսի անձին մէջ յայտնուելուն, երբ անձն ալ կը դասաւորուի այն «երկնայիններու» խմբակին հետ որ նախապէս յաւիտենական կեանքի արժանացած են։

3

Յօղ արեան քո Տէր,

Յօղեա՝ ի հոգիս,

Յնձապէ անձն իմ։

Անտարակոյս ակնարկութիւնը Յիսուս Քրիստոսի ըրած զոհողութեան եւ կրած չարչարանքին համար է։ Յիսուս անմեղ ըլլալով, ուրիշներուն մեղքերը Իր

վրայ առնելով, խաչին վրայ Իր արիւնը թափեց: Այդ արիւնը առաւօտեան ցօղին պէս ամէն ինչի վրայ տեղաց, այսինքն ամէն հոգիի, ամէն անհատի վրայ ազդեց, որովհետեւ ան մեղքերու թողութեան համար թափուած արիւնն էր: Երկրորդ տողը, անգամ մը եւս աղերսանք մըն է, որպէսզի մեր մեղքերն ալ նման «արիւնի ցօղ»-ով մաքրուին եւ մեր Հոգին՝ Քրիստոս մեր մէջ յայտնուի: Այն ատեն է որ մարդ երանութեան մէջ կ'ըլլայ եւ իր հոգին ալ կը ցնծայ:

Ի

Իւծեալս մեղօք,
Իւծեալ աղաչեմ,
Իւսել յիս բարիս:

Անհատը իր մեղքերու ծանրութեան տակ կ'քած, յոգնած եւ ուժաթափ ըլլալը հասկցած, Աստուծոյ կը խոստովանի իր տկար վիճակը: Աս կը ներկայացնէ անձին անդրադարձը իր հոգեկան կորուստին: Ան այդ վիճակով ալ Աստուծոյ կ'աղաչէ: Ի՞նչ է աղաչանքը: Այն է, որ Աստուած օգնէ, որպէսզի անձը կարողանայ իր բնոյթը փոխել որպէսզի միայն բարի եւ Աստուածահաճոյ խորհուրդ, խօսք ու արարքներ ունենայ: Միայն կատարելութեան ուղիէն ընթանայ:

Փ

Փրկիչ բոլորից,
Փովթա զիս փրկել,
Փորձութեանց մեղաց:

Ամէն անհատի ճշմարիտ Հոգին Քրիստոսի ներկայութիւնն է իր մէջ: Ընդհանուր ստեղծագործութիւնը Քրիստոսի արտայայտութիւնն է: Հետեւաբար

ամէն անհատի փրկիչն ալ Քրիստոսն է: Ահա՛, աս է իմաստը «Փրկիչ բոլորից»-ին: Երկրորդ տողը աղերսանք մըն է, որ Քրիստոս մեզ ալ շուտով փրկէ: Քրիստոս միշտ պատրաստ է փրկելու: Աստուծոյ շնորհքները կը տեղան անխտիր բոլորին՝ թէ՛ բարիներուն եւ թէ՛ չարերուն վրայ: Մարդ ինքն է որ կը խափանէ ներգործումը այդ շնորհներուն իր անձէն ներս: Երբ մարդ իր միտքին ղեկը կու տայ իր «Ես»-ին, ինք իր ձեռքով կը գոցէ Ս. Հոգիի զօրութեան մուտքի դռները: Ինչպէս անապատին մէջ Յիսուս իր «Ես»-էն՝ սատանայէն փորձուեցաւ բայց յաղթեց, նմանապէս մենք ալ յաճախ կ'ենթարկուինք մեր «Ես»-էն եկած փորձութիւններուն, բայց յաճախ կը յաղթուինք, քան թէ յաղթենք: Երբ մարդ կը յաջողի ինքզինք ձերբազատել իր «Ես»-էն, այն ատեն կը կարողանայ յարիլ եւ փարիլ Քրիստոսի: Այն ատեն է որ անհատը կ'արժանանայ Քրիստոսի յայտնութեան իր մէջ: Իսկ երբ Քրիստոս նոյնիսկ քիչ մը յայտնուի անձին մէջ, ինք ալ այլեւս զոհ չ'ըլլար իր «Ես»-էն եկած փորձութիւններուն:


Ք



Քաւիշյանցանայ,
Քաւեա զօրհնաբանս,
Քեզ երգել զփառս:

Անգամ մը եւս Շնորհալին կը ներկայացնէ Աստուծոյ յատկութիւններէն մին, որ յանցանքները՝ մեղքերը քաւող Տէր մըն է: Դարձեալ երկրորդ տողը աղերսանք մըն է, որպէսզի Աստուած մեր մեղքերն ալ ներէ՝ քաւէ: Բայց այդ մեղքերու քաւութեան արժանի ըլլալու համար անձը պարտ է որոշ փոփոխութիւններ յառաջ բերէ իր էութեան մէջ: Այս գաղափարը

յստակօրէն շեշտուած է երկրորդ տողին մէջ ու անձը ինք զինք կը ներկայացնէ իբրեւ «գօրհնաբանս»: Անտարակոյս այս բառը Շնորհալին օգտագործած է անոր փոխաբերական իմաստով: Օրհնութեան խօսք ըսողը պարզապէս ասդին-անդին «Օրհնեայ Տէր» ըսել է, այլ երրորդ տողը բացայայտ կ'ընէ անոր իմաստը ուր գրուած է. «Քեզ երգել զփառս»: Մարդուն երգած «երգը» իր կենցաղն է: Ուրեմն, որպէսզի մարդ արժանանայ մեղքերու քաւութեան պարտ է ինքզինք ամբողջովին փոխել՝ իր «Նս»-ը անտեսել, իր բնոյթը փոխել եւ իր անասնական բնոյթը անտեսել, եօթ մահացու մեղքերէն ինքզինք ձերբազատել: Այն ատեն է, որ իր կենցաղը կը փոխուի եւ ինք ալ կը սկսի Աստուծոյ փառքը «երգել»:

Եթէ եկեղեցիի արարողութիւններէն՝ ժամերգութիւններէն եւ Ս. Պատարագէն այս դասերը պիտի չառնենք, որպէսզի զանոնք կիրարկենք մեր կեանքերուն մէջ, ի՞նչ օգուտ կ'ունենայ մեզի...:







-Գ-

ԱՊՈՍՏՈՆԻ
ԺԱՄԵՐԳՈՒԹԵՆԷՆ
ԵՐԳ
«ՍԻՕՆԻ՝ ՈՐԴԻԲ»



ՄԻՕՆԻՐ ՈՐԴԻՔ

Այս երգին մեկնաբանությունը առաջուց հրատարակած էի «Լոյս 'ի Լուսոյ - Գ Տիեզերական օրէնքները» գիրքի մէջ «Խոկում» խորագրեալ գլուխ Ե-ի մէջ, էջեր 174-177: Յարմար կը նկատեմ այդ գրությունը այս գիրքին մէջ նաեւ կրկնել, որովհետեւ յօրինուած Շնորհալիի կողմէ անգամ մը եւս կը շեշտէ անհատին իր էությունն՝ Քրիստոսի հետ միանալը, այսինքն Քրիստոսի յայտնությունը անձին մէջ եւ անձին ալ պատշաճ կենցաղը իր այդ հայտնությունն արժանեւորությունը համար: Այս գլուխին մնացեալ մասը այդ մէջբերումն է:

«Հետեւեալ մէջբերումը «Առաւօտեան ժամերգությունն» վերջաւորութեան «Նորաստեղծեալ» երգին վերջին տունն է: Քանի խոկումը կարեւոր է «Ձարթօնք»ին համար, հոս, յարմար է այս մէջբերումին կարճ մեկնաբանությունը ներկայացնել:

Միօնի՛ որդիք, զարթիք, հարսին լուսոյ տուք աւետիք. եթէ փեսայն քո յարուցեալ՝ յաղթեաց մահու իշխանութեամբ. գայ պսակէ գրեզ փառօք, էլ ընդ առաջ պճնեալ զարդուք. երգեա՛ երգ՝ նոր յարուցելոյն, ննջեցելոյ կենաց պտղոյն:

«Միօնի որդիք»ը կը նշանակէ Աստուծոյ որդիները, այսինքն մենք՝ համայն մարդկությունը, որովհետեւ Միօնը «Վերին Երուսաղէմ»ն է: «Ձարթիք» արթնցէք կը նշանակէ, այն «Ձարթօնք»ը՝ գիտակցությունն մակարդակի բարձրացումը, որուն մասին այս գիրքին մէջ բազմիցս ակնարկուած է: «Հարսին լուսոյ տուք աւետիք»՝ մեր կեանքին նպատակը Աստուծոյ միանալն է, որ կը կոչուի անձին մէջ Աստուածայայտնություն: Ուրեմն մենք Լոյսին, որ մեր ներքին Քրիստոսը կը ներկայացնէ, հարսերն ենք: Ինչպէս

պսակի արարողութեամբ հարս եւ փեսայ կը միանան եւ մէկ հոգի եւ մէկ մարմին կ'ըլլան, որ միականութիւնը կը ներկայացնէ, մենք ալ պարտ ենք միականութիւնը յայտնաբերել, հարսի մը նման միանալով փեսային՝ Քրիստոսին: Ուրեմն մեզի՝ Լոյսին հարսերուն է որ աւետիսը՝ բարի լուրը կը տրուի: Իսկ ի՞նչ է բարի լուրը. Փեսային գալը եւ մեզ փառքով պսակելը: «Եթէ փեսայն քո յարուցեալ՝ յաղթեաց մահու իշխանութեամբ»ը ակնարկ է Յիսուսի խաչելութեան եւ յարութեան, ինչպէս նաեւ մեր ներքին Քրիստոսին, որ կը քնանայ: Յիսուս մեռցուեցաւ անձնասէրներու կողմէ, որոնք չուզեցին իրենց կենցաղին փոխուիլը՝ այն ինչ որ Յիսուս կը քարոզէր: Նմանապէս մեր անձերուն մէջ ալ մեր «Ես»երուն հետեւանք Քրիստոս կը ննջէ: Մենք ալ Քրիստոս խաչած եւ մահուան դատապարտած ենք: Բայց Ան յարութիւն պիտի առնէ: Մեր մէջն ալ Քրիստոս պէտք է իր քունէն արթննայ՝ յարութիւն առնէ: Յիսուս Գալիլեայի ծովուն վրայի դէպքով այս իրողութիւնը մեզի լաւ սորվեցուց: Ինք նաւուն մէջ կը քնանար: Երբ փոթորիկ ելաւ, ինք արթննալով հանդարտեցուց հովն ու ծովը: Եթէ փեսան՝ Քրիստոս արթննայ, «գայ պսակէ գթեզ փառօք»՝ միանալով Քրիստոսի, իր փառքով անձին մէջ Աստուածայայտնութիւնն ալ կ'իրականանայ: Հարսը՝ մենք, պէտք է այս պսակադրութեան համար պատրաստ ըլլանք: Հետեւեալը կը յանձնարարուի. «եւ ընդ առաջ պճնեալ զարդուք»: Նախ պարտ ենք մենք զմեզ պատրաստել այս միացումին: Հարս մը երբ իր հարսանիքին պիտի երթայ, ինք միայն անհրաժեշտ երկու բան պէտք է ընէ եւ ուրիշ ոչինչ: Նախ ինք պէտք է իր հաւանութիւնը տայ, թէ այդ փեսային հետ է որ կ'ուզէ ամուսնանալ, ինչ որ համապատասխան է անձին Աստուծոյ միանալու տենչանքին: Երկրորդն ալ հարսա-

նիքի օրուան համար պէտք է ինքզինք զարդարէ: «Պճնեալ զարդուք»ն ալ անձին մէջ Աստուածայատնութեան համար անհրաժեշտ ինքնազարդարումն է: Հետեւաբար մարդ ինքզինք պէտք է զարդարէ այն բոլոր յատկութիւններով, որ ներկայացուած է ստորեւ, նաեւ առնուած նոյն «Տիեզերական Օրէնքները» գիրքին «Տիեզերական Օրէնքները» խորագրեալ Բ գլխու վերջաւորութեան ներկայացուած ցանկէն: «Երգեա՛ երգ նոր յարուցելոյն»ն ալ անձի կենցաղին ամբողջովին փոխուելու անհրաժեշտութիւնն է: Մեր ապրած կեանքը մեր երգած երգն է: «Նոր երգ երգէ՛ն կը նշանակէ կենցաղի փոփոխութիւն եւ երգը կ'երգուի «Յարուցեալ»ին, որ կը նշանակէ այդ նոր կենցաղին Աստուածահաճոյ ըլլալը: Յարուցեալը հարկաւ Քրիստոս է եւ ինք մարդուն՝ «ննջեցելոց», կեանքի պտուղն է: Քանի որ մարդը հոգեկան քունի մէջ է, հետեւաբար Քրիստոս ալ «ննջեցելոց»՝ քնացողներուն կեանքի պտուղն է, այսինքն «Զարթօնք»ի միջոցը:

Խոկումը, Աստուածայատնութիւնը որպէսզի անձին մէջ իրականանայ, վերոյիշեալ երկու անհրաժեշտ ազդակներուն՝ տենչանքին եւ ինքնապատրաստութեան վերջին հանգրուանն է: Ան հարսին, իր հարսանիքին օրը, եկեղեցիէն ներս մուտքը կը ներկայացնէ եւ յառաջացումը դէպի Ս. Խորան: Ան Աստուծոյ հետ հաղորդակցութեան եւ հաղորդութեան միջոցն է: Ան աղօթքին ամենավեհ ձեւն է:

«Խանիւցէ՛լ է- Ժաներու-լ զի էս էմ Լսարու-թ»:

(Աադմոսայ ԽԼ:11)

«Հանդարտ կեցէ՛ք ու գիտցէ՛ք թէ՛ ես եմ Աստուած»:

(Աադմոսայ ԽԶ:10)

«Լ՛յլ դու- յորժամ կայեա յաղօթս, մո՛տս 'ի սէնեակ ի՞նչ է- փակեա՛ զդուրս ի՞նչ, էս կա՛յ յաղօթս ատ Լայր ի՞նչ Ժաշո՛ւկ, էս Լայրն ի՞նչ որ տեսանէ 'ի Ժաշո՛ւկ,

Հապոռացի Քէշ յայտնապէս» : (Մարտիկոս 9:6)

«Իսկ դո՛ւն՝ երբ աղօթեա՛ մտի՛ր ներքին սենեակդ, դոցե՛ դուռդ, եւ աղօթե՛ Հօրդ՝ որ գաղտնի տեղ կը գտնուի. ու Հայրդ՝ որ կը տեսնէ գաղտնիքը, բացառապէս քո պիտի հասուցանէ քեզի»:

Բոլոր դժբախտութիւններու պատճառը տիեզերական օրէնքներու դէմ մեր գործունէութիւններն են: Որպէսզի յաջողինք ըստ տիեզերական օրէնքներու գործել, պարտ ենք մեր բնոյթը փոխել եւ հետեւեալ օգտակար յատկութիւնները՝ ազդակները մեր անձերուն մէջ իրականացնել: Անոնք են.

ա - Տենչանք առ Բարձեալը,

բ - Ողորմածութիւն,

գ - Գթասրտութիւն,

դ - Քաջութիւն,

ե - Նուիրում,

զ - Հաւատք,

է - Ներողամտութիւն,

ը - Արատաճեռնութիւն,

թ - Շնորհալիութիւն,

ժ - Ուղղամտութիւն՝ պարկեշտութիւն,

ժա - Առաջնորդութիւն,

ժբ - Ուրախութիւն՝ ցնծութիւն,

ժգ - Յոյս,

ժդ - Ազնուութիւն՝ բարեացակամութիւն,

ժե - Համբերութիւն,

ժզ - Զմիջամտել՝ չէզոքութիւն,

ժէ - Գովաբանութիւն,

ժը - Պարտաճանաչութիւն,

ժթ - Գնահատութիւն,

ի - Շնորհակալութիւն,

իա - Սէր առանց պայմանի:



- Դ -

ԱՐԵՒԱԳԱԼԻ
ԺԱՄԵՐԳՈՒԹԵՆԷՆ
ԵՐԳ
«ԼՈՅՍ 'Ի ԼՈՒՍՈՅ»



ԼՈ՛ՅՍ 'Ի ԼՈՒՍՈՅ

Առաջին երկու երգերը առնուած էին «Գիշերային» ժամերգութեանէն: Այդ հանգրուանին մարդ տակաւին նոր անդրադարձած էր իր խաւարամտութեան եւ կը ձգտէր որոշ արթնութեան մը: Երբ ան կը յաջողի որոշ արթնութիւն մը ձեռք ձգել կը սկսի Աստուած փառաբանել, որ «Գիշերային»-ին յաջորդող «Առաւօտեան» ժամերգութեան մէջ ներկայացուած է «Փառք 'ի բարձունս» երգով: «Արեւազալի» ժամերգութիւնը կը յաջորդէ «Առաւօտեան»-ին: Այս գլուխին մէջ նկատողութեան առնուած երգը «Արեւազալ»-ի ժամերգութեան երգերէն է: Արեւին գալուստը Քրիստոսի յայտնութիւնն է անձին մէջ: Այս ժամերգութիւնը Ս. Պատարագէն առաջ եղող վերջին ժամերգութիւնն է, որ անհատը կը պատրաստէ Քրիստոսի հետ հաղորդութեան: Ասիկա ներկայացուած է Պատարագի աւարտման տրուած եւ առնուած հաղորդութեամբ: Քրիստոսի հետ հաղորդուելին ալ Անոր միանալ եւ անոր մէջ լուծուելին է: Այս հանգրուանին անհատը հասած որոշ հոգեկան արթնութեան՝ տէր «վերստին ծնունդի», այսինքն ինքզինք ձերբազատած իր «Ես»-էն եւ աշխարհիկ հետապնդումներէն կը ձգտի Քրիստոսի յայտնութեան իր մէջ եւ այդ յայտնութեան իրականացման համար ալ իր մէջ ծագումը «իմանալի Լոյս»-ին, որուն մասին ստորեւ տեղեկութիւն պիտի տրուի: Երգը չորս տուներէ կը բաղկանայ, որոնց ամէն մէկը աղերսանք մըն է: Առաջին երեքը ուղղուած Աստուծոյ երեք երեւոյթներուն, ինչպէս նաեւ չորրորդ տունն ալ անոնց միականութեան:

Լո՛յս, արարիչ լուսոյ առաջին լո՛յս.
 բնակեալդ՝ ի լոյս յանմատոյց,
 Հայր երկնաւոր՝ ի դասուց լուսեղինացն
 օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօտուս,
 ծագե՛ա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Այս առաջին տունին մէջ Շնորհալին իր խօսքը կ'ուղղէ Հայր Աստուծոյ: Վերելի առաջին երկու պարզ տողերով Շնորհալին հսկայական հասկացողութիւն մը կը փոխանցէ մեզի: Հայր Աստուած «Լոյս»-ին արարիչը՝ ստեղծիչն է: Բայց միանգամայն նախադասութիւնը կը սկսի «Լոյս» բառով: Հետեւաբար Հայր Աստուած ինք թէ «Լոյս»-ն է, թէ՛ ալ «Լոյս»-ին արարիչը: «Լոյս»-ը Աստուծոյ թէ՛ Որդին Քրիստոսն է եւ թէ՛ ալ Ս. Հոգին: Այս տեղեկութիւնը պարզապէս յայտնի կ'ըլլայ երբ կարդանք յաջորդ երկու տուները եւս: Այս հասկացողութիւնը ակնարկութիւն մըն է «Երրորդութեան» միականութեան: Միաժամանակ Հայր Աստուած ալ նոյն «Լոյս»-ն է: Երկրորդ տողը կը պարզէ թէ Հայր Աստուած այդ Լոյսին մէջ կը «բնակի»՝ ինք այդ Լոյսին մէջ է, հետեւաբար Անոր մաս կը կազմէ: Այդ Լոյսը «անմատոյց» է, այսինքն անմատչելի, անհասանելի եւ անհասկնալի: Երրորդ տողը յայտնի կ'ընէ, թէ Հայր Աստուծոյ օրհնութիւնն է, որ մարդուն «զարթօնք»՝ արթնութիւն կու տայ: «Զարթօնք»-ը կը ներկայացնէ գիտակցութեան մակարդակի բարձրացում: Ընդհանուր տիեզերքի մէջ միայն մէկ գիտակցութիւն կայ եւ ան ալ Աստուծոյ գիտակցութիւնն է, որ մարդ, իր ուղեղին միջոցաւ, իր միտքին արտօնած մակարդակին համաձայն,

զայն կը յայտնաբերէ: «Դասուց լուսեղինաց»-ը ականարկութիւն մըն է անոնց որոնք վերոյիշեալ «զարթօնք»-ը ունեցած են: Վերջին երկու տողերը աղերսանք մըն են, որպէսզի Աստուծոյ «Լոյս»-ը՝ բարձր որակով գիտակցութիւնը մեր հոգիին մէջ ալ ծագի, ինչպէս Առաւօտուն արեւին լոյսը կը ծագի եւ ամէն ինչ տեսանելի կ'ընէ: Այս գիրքին մէջ ինչպէս առաջուց, նախորդ գիրքերուս մէջ եւս շեշտուած էր, մեր կեանքը մեր ներքին Քրիստոսի երազն է: Քրիստոս մեր հոգին է: Ան մեր մէջ Աստուծոյ ներկայութիւնն է: Երբ Քրիստոս իր ունեցած երազէն «արթննայ», երազողն ալ, որ երազին մէջ ըլլալով հանդերձ, հոն չի տեսնուիր, մեզի կը յայտնուի: Բարձր գիտակցութեամբ մենք ալ կ'անդրադառնանք ճշմարտութեան եւ կը հասկնանք թէ այս մեր ներկայ կեանքը միայն երազ մըն էր: «Ծագե՛ա 'ի հոգիս մեր»-ը ականարկութիւն մըն է Քրիստոսի երազէն «արթննալուն»՝ յայտնուելուն: Իսկ, «զլոյս քո իմանալի»-ն ալ ականարկութիւն մըն է գիտակցութեան մակարդակին:

Լո՛յս, 'ի լուսոյ ծագումն արեգակն արդար:
անճառ ծնունդ Հօր Որդի. յառաջ քան
զարեւ անուն քո գովեալ ընդ Հօր.
'ի ծագել լուսոյ առաւօտուն,
ծագե՛ա 'ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Այս տունին մէջ Շնորհալին կը ներկայացընէ Աստուծոյ Որդին՝ Քրիստոս, որ «ծնունդ» առած է Հօրմէն: Այդ «ծնունդ»-ը նկարագրելու համար «անճառ», որ կը նշանակէ, թէ

մարդ արարած կարող չէ հասկնալ զայն, ինչպէս նաեւ կարող չէ նման ծնունդ մը ճառել, որովհետեւ այդ ծնունդը գաղտնի է, անհուն է, հասանելի չէ եւ մարդ արարած արժանի չէ այդ ծնունդը ճառել: Որդին նաեւ նկարագրուած է իբրեւ «արդար արեգակ»-ը: Անտարակոյս «արեգակ» բառը օգտագործուած է իր փոխաբերական իմաստով: Շատ լաւ գիտենք թէ աշխարհի վրայ կեանք գոյութիւն պիտի չունենար առանց արեւի: Հետեւաբար Շնորհալիին ըրած ակնարկութիւնը Որդւոյն ստեղծագործութեան մէջի կեանքը ըլլալն է: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ կեանքը»: Միանգամայն այդ կեանքը ներկայացուած է իբրեւ «արդար»: Այս հիման վրայ մեր կեանքի բոլոր փորձառութիւնները՝ անոնք ըլլան լաւ ու վատ, պատշաճ են, այսինքն արդար, հետեւաբար վատերուն համար պէտք չէ գանգատինք ու աս-ու-ան կամ Աստուած մեղադրենք (յիշենք մեր ազգին անցեալի ճակատագիրը): Որդւոյն «անունը» գովելի էր Հօրը մօտ նոյնիսկ ստեղծագործութենէն առաջ: Աս հասկնալի է «յառաջ քան զարեւ»-էն, որովհետեւ արեւին գոյութիւնը կը ներկայացնէ ստեղծագործութիւնը: Ուրեմն Որդին Հայր Աստուծոյ հետ մէկ է եւ ժամանակի ենթակայ չէ, հետեւաբար յաւիտենական է: Այս տունին վերջին երկու տողերը կրկնութիւն են, որոնց մասին տեղեկութիւն տրուած էր առաջին տունի մեկնաբանութեան մէջ: Այդ տողերը կրկնուած են նաեւ յաջորդ երկու տուններուն վերջաւորութեան եւս: Այս հանգրուանին միայն կարճ բացատրութիւն մը պիտի տրուի «իմանալի» լոյսին մասին: Վերեւ, այդ

նկարագրուած է իբրեւ մեր յայտնաբերած գիտակցութեան մակարդակը: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ աշխարհի Լոյսը»: Գրաբարի «Նոր Բառագիրք Հայկազեան Լեզուի» բառարանին մէջ. «Իմանալի» բառին համար գրուած է. «Ըմբռնելի մտօք. ճանաչելի հոգւով. անկեալ ընդ տեսութեամբ մտաց, եւ ոչ աչաց»: Ուրեմն Շնորհալիին ակնարկութիւնը աչքերուն տեսած լոյսին համար չէ, այլ՝ մտքին ըմբռնումը, այսինքն գիտակցութիւն:

Լոյս, 'ի Հօրէ բղխումն աղբիւր բարութեան,
Հոգիդ Սուրբ Աստուծոյ.

մանկունք եկեղեցւոյ ընդ Հրեշտակս զքեզ
փառաբանեն. 'ի ծագել լուսոյ առաւօտունս,
ծագել' ա' 'ի Հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Այս երրորդ տունին մէջ Շնորհալի կը նկարագրէ Ս. Հոգին: Ս. Հոգին ալ Հօրմէն բղխած է եւ Հայր Աստուծոյ զօրութիւնը կը ներկայացնէ: Ս. Հոգիի զօրութիւնը անընդհատ կը «հոսի» ընդհանուր տիեզերքին մէջ: Այսօր նոյնիսկ տիեզերաբան գիտունները նոյնը կ'ըսեն եւ որովհետեւ տակաւին չեն գիտեր այդ զօրութեան բնոյթը, զայն «մութ զօրութիւն» կոչած են: Որովհետեւ Ս. Հոգիի զօրութիւնը անընդհատ կը հոսի, Ան նկարագրուած է որպէս «աղբիւր», ինչպէս աղբիւրի մը ջուրը անընդհատ կը հոսի: Այդ զօրութիւնը դրական զօրութիւն մըն է եւ ընդհանուր ստեղծագործութեան միջոցն է, հետեւաբար Ան նաեւ նկարագրուած է իբրեւ «բարի»՝ «աղբիւր բարութեան»: Վստահաբար պիտի գտնուին անհատներ, որոնք պիտի

ըսեն թէ Ս. Հոգին ի՞նչպէս բարի կ'ըլլայ, ան մեզի միշտ կը պատժէ: Անոնք նման զաղափարներ կը յայտնեն յենեւոյ Յիսուսի հետեւեալ խօսքին վրայ. «Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»: Անտարակոյս անոնց հասկացողութիւնը սխալ է: Շնորհալին այս կէտը լաւ հասկցած է, որով յատկապէս կը շեշտէ Ս. Հոգիի զօրութեան բարի ըլլալը: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ զինք կառավարող օրէնքներ ունի՝ Ֆիզիքականը ունի քաշողական զօրութեան օրէնքը, կան նաեւ քիմեական եւ հիւլէական զօրութիւնները կառավարող օրէնքներ, ինչպէս նաեւ ելեկտրամագնիսական ճառագայթները եւ ելեկտրականութիւնը կառավարող օրէնքները: Ասոնք մեզի ներկայացուած են իբրեւ բնագիտութեան օրէնքները: Երբ մարդ այդ օրէնքները գիտէ եւ զանոնք պատշաճ կերպով կ'օգտագործէ, այսինքն օրէնքներուն հետ ներդաշնակօրէն կը գործէ, կը յաջողի անոնցմէ օգտուիլ: Նմանապէս հոգեկան գետնի վրայ ալ, երբ անձը իր կենցաղը կ'ապրի զինք կազմող Ս. Հոգիի զօրութիւնը կառավարող օրէնքներուն հետ ներդաշնակօրէն, իր կեանքն ալ կ'ըլլայ դրախտային: Բայց եթէ ան գործէ աններդաշնակօրէն, այն ատեն իր կեանքն ալ կ'ըլլայ դժոխքային: Աս ըսել չէ թէ Աստուած մեզ կը պատժէ: Ծիշդ աս էր որ Յիսուս ուզեց մեզի սորվեցնել իր վերեւի խօսքով: Եթէ հոսանքին կապուած թելը բռնես, հոսանքը պիտի չզարնէ՞, եթէ երկրորդ յարկի պատշգամէն դուրս քալես, վար պիտի չիյնա՞ս: Արդեօք կարելի է՞ ըսել թէ Աստուած պատժեց: Ո՛չ: Յիսուս Քրիստոս մեզի սորվեցուց կատա-

ընթացումն ուղիղ, աշխարհն Ս. Հոգիի զօրութիւնը կառավարող օրէնքներուն հետ ներդաշնակ ապրիլ: Ինչո՞ւ կ'անտեսենք: Եթէ ամէն ինչ Ս. Հոգիի զօրութեամբ յառաջ եկած է եւ Ս. Հոգիի զօրութեան ֆիզիքական արտայայտութիւնը Քրիստոսն է եւ ամէն անհատի ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է՝ այդ Ձօրութեան մարմնացումը, ուրեմն մենք բոլորս ալ մէկ չե՞նք, հակառակ որ մենք մեզ ուրիշներէ զատ ու տարբեր կը տեսնենք: Այս հիման վրայ որեւէ բոյսի, անասունի եւ անձի հետ վատ վարուիլ կը ներկայացնէ մեզ կազմող զօրութեան հակառակ գործել: Ուրեմն չե՞նք խորհիր որ այդ վատութիւնը մեզի ետ պիտի գայ:

Այս տունին մէջ, Շնորհալին մեզ ներկայացուցած է իբրեւ մանուկներ: Անտարակոյս ակնարկութիւնը մեր հասած հոգեկան մակարդակին համար է եւ ոչ թէ մեր տարիքով հասուն մարդ եղած ըլլալը, կամ՝ ոչ: Եկեղեցին հաւատացեալներու միասնականութիւնն է: Ինչպէս հրեշտակները որ Աստուծոյ զօրութեան զանազան արտայայտութիւններն են եւ իրենց կենցաղով միշտ Ս. Հոգին կը փառաբանեն: Նմանապէս, Եկեղեցիին բոլոր անդամներն ալ իրենց կենցաղով՝ Ս. Հոգիի օրէնքներուն հետ ներդաշնակ ապրելով Ձինք փառաբանած կ'ըլլան: Հետեւաբար այս թէ՛ աղերսանք մըն է եւ թէ՛ ալ՝ խոստում մը, որ մեր կենցաղը ըլլայ Յիսուս Քրիստոսի սորվեցուցած կատարելութեան ուղին: Միայն այն ատեն է, որ մեզի համար կարելի պիտի ըլլայ, աւելի ճիշդ է ըսել, արժանի պիտի ըլլանք ստանալու Քրիստոսի յաւելեալ «իմանալի լոյսը»՝ բարձր գիտակցութիւնը

որպէսզի կարողանանք «տեսնել» Ճշմարտութիւնը եւ Զայն զանազանել պատրանքէն:

**Լո՛յս, երբեակ եւ մի անբաժանելի Սուրբ
Երրորդութիւն.**

զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ
փառաւորեմք. 'ի ծագել լուսոյ առաւօտուս,
ծագե՛ա 'ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Այս չորրորդ եւ երգին վերջին տունը կը ներկայացնէ Աստուծոյ Երրորդութեան միականութիւնը: «Երբեակ» բառով Շնորհալին կը ներկայացնէ մէկ, անբաժանելի Աստուծոյ երեք երեւոյթները, երեք արտայայտութիւնները, երեք յայտնութիւններ ունենալը, որ Ս. Երրորդութիւն կը կոչենք:

Ամէն արդիւնք պատճառ մը ունի: Ստեղծագործութիւնը արդիւնք մըն է հետեւաբար պէտք է պատճառ մը ունենայ, հոգ չէ թէ այդ պատճառին ինչ ըլլալը գիտնանք, կամ ոչ: Այդ պատճառը Աստուած կոչած ենք: Եթէ ուսումնասիրենք պատճառի եւ արդիւնքի իրարու հետ ունեցած փոխյարաբերութիւնը պիտի տեսնենք որ այդ փոխյարաբերութիւնը կառավարող երեք օրէնքներ կան: (Այս ուղղութեամբ տես նաեւ նախորդ գիրքերէս «Լոյս 'ի Լուսոյ» գիրքին մէջ «Աստուած կա՞յ թէ չկայ» խորագրեալ գլուխ Դ. էջ 73-94)

ա- Որեւէ արդիւնք առանց պատճառի գոյութիւն չունենար:

բ- Արդիւնքները նոյն պատճառն են՝ զանազան կերպարանքներով:

գ-Արդիւնքը պատճառէն հանէ՝ ոչինչ կը մնայ:

Այս հանգրուանին, պատշաճ կը նկատեմ, արդիւնքի եւ պատճառի կապակցութեամբ, հետեւեալը աւելցնել: Նկատողութեան առնենք կաւէ աման մը: Անտարակոյս, այդ ամանը գոյութիւն պիտի չունենար առանց պատճառի: Ամանին գոյութեան պատճառը կաւն է: Առանց կաւի ամանը գոյութիւն պիտի չունենար: Ըստ երկրորդ օրէնքին կաւը ամանին մաս կը կազմէ: Զանազան ձեւ եւ նպատակի համար կաւէ ամաններ գոյութիւն կրնան ունենալ, բայց բոլորն ալ կաւ են: Եթէ կաւը ամանէն հանենք ամանն ալ կ'անհետանայ: Եթէ նոյնիսկ ամանը կոտրենք եւ փշրենք դարձեալ կաւը կը մնայ: Կաւը պատճառն է եւ ամանը արդիւնքը: Բայց որպէսզի այդ կաւէ ամանը գոյութիւն ունենայ քանի պատճառներ ունի⁶: Եթէ լաւ խորհինք այդ թիւը պէտք է ըլլայ երեք: Առաջինը ամանի գաղափարը յղացողը: Երկրորդը ամանը շինողը իսկ երրորդն ալ կաւը: Եւ այս երեք պատճառները երրորդութիւն մը կը կազմեն: Ընդհանուր ստեղծագործութեան գաղափարը եւ պատճառը Հայր Աստուածն է: Զայն կազմող եւ շինողը Հայր Աստուծոյ զօրութիւնը՝ Ս. Հոգին է: Իսկ Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն ալ այդ Զօրութեան մարմնացումն է:

Հետեւաբար, Շնորհալին կը թելադրէ որ մենք հոս, այս աշխարհիկ կեանքի ընթացքին, նման երկնայիններուն եւ անոնց հետ մեր կենցաղով Աստուած փառաւորենք: Իսկ երկնայինները անոնք են, որոնք հասած բարձր գիտակցութեան, այլեւս աշխարհի վրայ վերամարմնանալու ստիպողութիւնը չունին: Վերջին երկու տողը կրկնութիւն է նախկին տուներուն

հետ, հետեւաբար աւելի մեկնաբանութեան կարիքը չկայ:

ԱՄԷՆ



ԱՅԲԵՆԱԿԱՆ ԱՂՈԹԸ

Արարիչ
 Բովանդակ Գոյութեանց.
 Դատաւոր Երկնից.
 Զօրավոր Էութիւն.
 Ըստիւն Թագաւոր Ժամանակաց,
 Իրաց, Լուսոյ, Խաւարի, Ծովուց,
 Աննսականաց, Համայնից.
 Զայն Ղողանջական.
 Ճեմարան Մտաց.
 Յիսուս Նապովիեցի.
 Ծնորի Ոգեշունչ.
 Զարեաց Պատառիչ.
 Զանադիր Ռաբբի.
 Սրբոց Վկայարան.
 Տէր մե՛ր Յանկալի
 ո՛ւ Փառք
 Բրիաւտալի:

ՎԵՐՋԱԲԱՆ

ԿԱԹՈՒՄԸ ԶՈՒՐ

Հսկայ ովկիանոսը լի է ջուրով: Արեւուն տաք շողերը կը շոգիացնեն անոր փոքր մէկ մասնիկը, որ ապագային կը կազմեն ամպեր եւ յետոյ ալ երկիր կը տեղան իբրեւ բազմաթիւ ջուրի կաթիլներ: Նկատողութեան առնենք միայն մէկ կաթիլի մը «կեանքը»: Այդ մէկ ջուրի կաթիլը կունենայ շատ մը «կեանքեր»: Առաջին անգամ ան կ'իյնայ հողի վրայ, հողը գայն կը ծծէ, հողին մէջէն բոյսի արմատ մը կը ծծէ եւ կը բարձրացնէ մինչեւ իր տերեւներէն մէկուն մէջ եւ այդ կաթիլը տերեւին կեանք կու տայ: Օր մը տերեւը կը փրթի, վար կ'իյնայ եւ կը չորնայ՝ կը մեռնի: Ան կը չորնայ որովհետեւ իր մէջի կաթիլ մը ջուրը կը շոգիանայ եւ կ'երթայ: Օր մը դարձեալ անձրեւ կը տեղայ եւ կաթիլ մը ջուրը դարձեալ երկիր կը վերադառնայ: Այս անգամ անասուն մը հաւաքուած ուրիշ ջուրի կաթիլներու հետ այդ կաթիլ մը ջուրն ալ կը խմէ: Կաթիլը անասունին մարմնին կեանք կու տայ եւ օր մըն ալ քրտինքին կամ մէզին հետ դուրս կ'ելլէ եւ անգամ մը եւս կը շոգիանայ: Նորէն անձրեւին հետ այդ կաթիլ մը ջուրը երկիր ետ կու գայ: Այս անգամ լիճի մը մէջ կ'իյնայ եւ ձուկերուն շնչելնուն օգտակար կ'ըլլայ, բայց օր մը դարձեալ կը շոգիանայ եւ երկինք կը բարձրանայ: Օր մըն ալ երկիր վերադառնալով աւերներ կը գործէ եւ դարձեալ կը շոգիանայ եւ օր մը դարձեալ երկիր ետ կը վերադառնայ եւ այս անգամ ալ մարդու մը խմած ջուրին հետ, անոր մարմնին մաս կը կազմէ ապահովելով անոր կեանքը եւ առողջութիւնը: Օր մը մարդէն ալ կը բաժնուի եւ կը շոգիանայ: Բազմաթիւ նման փորձառութիւններէ վերջ օր մըն ալ կաթիլը կը կաթի արագ ընթացող գետի մը մէջ եւ կարճ ժամանակ վերջ

ովկիրանոսին մէջ կը թափի եւ անոր մէջ կը լուծուի ու անոր հետ մէկ կ'ըլլայ, ուրկէ որ ինք սկիզբէն ծագում առած էր:

Մարդ արարած եթէ ուշիմ ըլլայ եւ բնութեան մէջ անցած դարձածին ուշադրութիւն ընէ շատ բան կրնայ սորվիլ մարդկային կեանքին նկատմամբ եւ սորվածը մեկնաբանել եւ իր ապրած կեանքին եւս հետեւցընել: Անտարակոյս վերեւի «Կաթիլ մը Զուր»-ին պատմութիւնը պարզ իրողութիւն մըն է եւ շատերու համար Փիզիքական աշխարհի մէջ իրողութիւն մը ըլլալէ զատ որեւէ ուրիշ իմաստ չունի: Ճիշտ է թէ աշխարհի վրայ կեանք գոյութիւն պիտի չունենար եթէ արեւ եւ ջուր գոյութիւն չունենային: Բոլոր անասունները ճշմարտութիւնը կը «տեսնեն» ըստ իրենց հինգ զգայարանքներուն իրենց տուած տեղեկութիւններուն: Բայց Աստուած մարդուն տուած է իմացականութիւն, որ ընդհանուր առմամբ անասունները չունին: Ի՞նչ է նպատակը այս իմացականութեան: Ատիկա մարդուն տրուած է որպէսզի մարդ իր տրամաբանելու կարողութեամբ հասկնայ ինչ որ մարմինը չի կրնար շօշափել, «տեսնել», ինչ որ Փիզիքական աշխարհի կրնար տեսնել եւ իմանալ, այն ինչ որ ականջը կարող չէ զայն լսել: Մարդուն իմացականութիւնը իրեն կու տայ կարողութիւնը թանձրացեալին մէջ տեսնել վերացականը:

Այս հիման վրայ եթէ նկատողութեան առնենք «Կաթիլ մը Զուր»-ին պատմութիւնը շատ տրամաբանական կը թուի ըլլալ երբ այդ պատմութեան մէջի ամէն ինչի տրուի փոխաբերական իմաստներ: Ենթադրենք թէ արեւը կը ներկայացնէ Հայր Աստուածոյ կամքը, եւ ընդհանուր ովկիրանոսը Հայր Աստուած: Ովկիրանոսին ջուրը՝ Ս. Հոգիի կենսատու գորութիւնը եւ

ովկիանոսէն զատ երկրի վրայի բոլոր ջուրերն ալ
 Աստուծոյ Որդին՝ Քրիստոս: Ամէն մի ջուրի կաթիլն
 ալ՝ անհատ մը աշխարհի վրայ: Ինչպէս ջուրին կաթիլը
 անմահ է եւ կը գոյատեւէ իբրեւ ջուրի կաթիլ կամ
 իբրեւ շոգի, նմանապէս մարդն ալ կը գոյատեւէ իբրեւ
 մարմնացած մարդ աշխարհի վրայ կամ իբրեւ միայն
 հոգի մարմնին մահէն ետք, որ պատմութեան մէջ
 ներկայացուած է իբրեւ շոգիացած ջուրը: Բոլոր ջուրի
 կաթիլները ովկիանոսէն ծագում առած են եւ ամէն
 մէկը աշխարհի վրայ իր ուրոյն փորձառութիւնները
 կ'ունենայ եւ ի վերջոյ օր մըն ալ դարձեալ ետ
 ովկիանոս կը հասնի եւ անոր մաս կը կազմէ: Մարդուն
 կեանքին նպատակը իրականացնել է այն ինչ որ ան-
 խուսափելի վերջ մըն է, որպէսզի աւելորդ պակաս՝ եր-
 բեմն լաւ երբեմն ալ վատ պատահարներու փորձառու-
 թիւններ ունենալու տեղ իր անդորրութիւնը եւ իր
 երանութիւնը գտնէ ովկիանոսին՝ Աստուծոյ հետ մէկ
 ըլլալով եւ Անոր մէջ լուծուելով: Ճիշդ աս էր որ
 Յիսուս Քրիստոս մեզի սորվեցուց եւ ճիշտ աս էր որ
 Ներսէս Շնորհալին հասկցած էր եւ մեզի փոխանցեց
 այս գիրքին մէջ ներկայացուած իր երգերով: Ջուրին
 կաթիլը ինքնին կարող չէ իր ապագան որոշելու:
 Աստուծոյ կամքովն է որ ան ետ ովկիանոս կը
 վերադառնայ: Նմանապէս մարդ չի կրնար Քրիստոս իր
 մէջ յայտնաբերել եւ Անոր հետ հաղորդակցիլ:
 Քրիստոսի յայտնութիւնը կ'ըլլայ միայն ու միայն
 Աստուծոյ կամքով: Բայց մարդ կարողութիւնը ունի
 ինքզինք պատրաստելու եւ Ս. Հոգիի յաւելեալ զօրու-
 թեան ընդունակ անօթ մը ըլլալով արժանանալ իր մէջ
 Աստուածայայտնութեան եւ նմանիլ իր վարդապետին՝
 Յիսուս Քրիստոսին: Միթէ ճիշդ այդ չէ՞ որ Յիսուս
 մեզի սորվեցուց. աշակերտը չի կրնար իր վարդապե-
 տէն գերիվեր ըլլալ, բայց կրնայ անոր նման ըլլալ:

Ներսէս Շնորհալի այս չորս երգերուն մէջ բացա-
յայտ կ'ընէ թէ ինչ է մարդուն կեանքին նպատակը:
Ինչպէս «Յառաջաբան»-ին մէջ գրուած էր, այդ նպատա-
կը մարդուն մէջ Քրիստոսի յայտնութիւնն է: Շնորհա-
լին բազմիցս կրկնած է Լոյսին մեր մէջ ծագելը՝ Քրիս-
տոսի մեր մէջ յայտնուիլը: Ան նաեւ «Լոյս ի Լուսոյ»
երգին մէջ շեշտած է «Իմանալի լոյս» ըսելով որ
փոխաբերաբար կ'ակնարկէ մարդուն գիտակցութեան
մակարդակին: Բարձր գիտակցութեան մակարդակ մը
մարդուն կող տայ շատ աւելի լաւ հասկացողութիւն,
շատ աւելի բարձր իմաստութիւն եւ ձգձարտութիւնը
«տեսնելու» կարողութիւն: Չորս երգերն ալ հոգեկան
արթնութեան եւ Քրիստոսի մեր մէջ յայտնութեան ա-
ղերսանքներ են: Մարդ իր աղերսանքներուն անկեղծու-
թեան համաձայն կը ստանայ նաեւ Աստուծոյ շնորհ-
ները: Աղերսանքները պէտք է սրտանց ըլլան, իսկ եթէ
անոնք միայն «բերնի ծամոց» խօսքեր են, որեւէ
ազդեցութիւն չեն ունենար:

Շնորհալին հասկցած ըլլալով Յիսուս Քրիստոսի
մեզի սորվեցուցած՝ Ս. Գիրքի մէջի թաքուն իմաստա-
սիրութիւնները, մեր կեանքին նպատակը եւ այդ նպա-
տակը իրականացնելու միջոցները, զանոնք մեզի
ներկայացուցած է իր երգերով: Ինչպէս վերեւ գրուած
է կեանքին նպատակը մեր մէջ Աստուծոյ Լոյսը՝
Քրիստոս յայտնաբերելն է: Իսկ այս յայտնութիւնը
իրականացնելու միջոցները հետեւեալներն են.
գիտութիւն, ձեռքազատում, պաշտամունք եւ կենցաղ:

Կան ոմանք, որ կ'ըսեն թէ փրկութիւնը գիտու-
թեամբ չ'ըլլար այլ միայն հաւատքով: Նման հասկացո-
ղութիւն անտարակոյս հիմնուած է Աւետարանի որոշ
մէկ համարի վրայ, բայց դժբախտաբար անոր սխալ
մեկնաբանութեան հետեւանք: Գիտութիւնը ունի շատ
մը երեւոյթներ (տես նաեւ «Աւետարանի Խորհուրդները Դ -

Յովհաննուս եւ Թովմասի Աւետարան» գիրքիս մէջի «Վերջաբան»-ին մէջ էջեր 307-311): Այն ինչ որ դպրոցը եւ յետոյ ալ համալսարանը կը սորվինք արտաքին աշխարհի նկատմամբ մեզի տրուած գիտութիւնն է: Ժիշտ է թէ այդ գիտութեամբ մարդ կարող չէ հոգեկան գետնի վրայ որեւէ յառաջգիտութիւն ունենալ: Բայց կայ նաեւ գիտութիւն մը, որ կը գերազանցէ դպրոցի սորվեցուցած գիտութիւնը: Գիտութիւնը (knowledge)՝ տեղեկութիւն, հմտութիւն եւ հասկացողութիւն ունենալն է, որ «գետ»-ի մը նման կ'ընթանայ եւ արտաքին աշխարհի գիտութիւնը (science) կ'անցնի: Միթէ այսօր գիտուններն ալ անելի մը առջեւ չեն: Շուարած չեն գիտեր ինչ ուղղութեամբ ընթանալ: Հոն ուր, որ գիտութիւնը (science) կը կենայ, հոգեկան գիտութիւնը (spiritual knowledge) կը սկսի: Այն ինչ-որ արտաքին աշխարհը ուսումնասիրելով գիտութիւնը տակաւին չէ հասկցած ու սորված, ներքին աշխարհը ուսումնասիրող գիտութիւնը ամէն ինչ մեզի կը պարզէ: Ոչ թէ մեզի միայն կը սորվեցնէ, այլ մեզ Աստուծոյ կը մօտեցնէ:

Ինչպէս վերեւ գրուած է, ըստ որոշ հասկացողութեան մը կարեւորը հաւատքն է: Անտարակոյս հաւատքը ամենակարեւոր ազդակն է: Առանց հաւատքի անկարելի է հոգեկան գետնի վրայ յաջողիլ: Բայց ի՞նչ կը հասկնանք «հաւատք» ըսելով: Հաւատքը պարզապէս կը հաւատամ ըսել չէ: Դժբախտաբար, շատեր իրենց խաւարամտութեան տուած հաւատալիքները յամառօրէն կը պնդեն ճշմարիտ հաւատք ըլլալ: Հաւատքը ամբողջ էութեամբ յանձնուիլն է, ինչպէս նորածին երախայ մը իր մօր խնամքին կը յանձնուի բացարձակ հաւատքով: Հաւատալը, պարզապէս. «ես Յիսուս Քրիստոսի կը հաւատամ, որ Ան Աստուծոյ միածին Որդին է եւ իմ մեղքերս քաւելու համար խաչին վրայ մեռաւ, հետեւաբար փրկուած եմ» ըսել եւ ասդին-անդին

«փառք քեզ Տէր» յայտարարել չէ: Միթէ Յիսուս Քրիստոս չըսա՞ւ. «Ինչո՞ւ զիս Տէր, Տէր կը կոչե՞ք եւ չէ՞ք գործադրեր Հօրս կամքը»: Հետեւաբար, ճշմարիտ հաւատքը Հօրը կամքը՝ Յիսուս Քրիստոսի բոլոր սորվեցուցածները գիտնալ, հասկնալ, իւրացնել եւ գործադրելն է: Միթէ այս բոլորը գիտութիւն չէ՞: Եթէ մարդ իր կեանքին նպատակին, Յիսուս Քրիստոսի սորվեցուցածներուն գիտութիւնը չունենայ, արդեօք կարելի է՞ յաւիտենական կեանքի արժանանալ: Ինչպէս առաջուց չեչտուած էր, գիտութիւնը երկու երեւոյթներ ունի, մին գիտութիւն նկատմամբ արտաքին աշխարհի, իսկ միւսն ալ նկատմամբ «ներքին աշխարհի»: Ինչո՞ւ ներքին աշխարհի: Որովհետեւ մեր մարմինները Աստուծոյ տաճարներն են, որովհետեւ Աստուած մեր նեւիրդին է, որովհետեւ մեր ճշմարիտ էութիւնը Քրիստոսի ներկայութիւնն է մեր մէջ: Եթէ մարդ իր էութեան մասին գիտութիւն չ'ունենայ, ի՞նչ կ'ըլլայ իր վիճակը:

Աստուծոյ Լոյսը՝ Քրիստոս մեր մէջ յայտնաբերելու միջոցներէն երկրորդն ալ ձերբազատուամն է: Մարդ ընդհանուր առմամբ կը հաւատայ այն բոլոր տեղեկութեան, որ ինք իր հինգ զգայարաններով կը ստանայ: Հետեւաբար ան նաեւ կը կարծէ թէ աշխարհի բոլոր զանազանութիւնները ճշմարտութիւն են եւ կը յարի եւ կը փարի անոնց: Մարդուն հինգ զգայարանները միայն արտաքին աշխարհէն տեղեկութիւն կրնան տալ: Իր այս բռնած ընթացքը իրեն կու տայ տեղեկութիւն ու գիտութիւն միայն արտաքինին մասին, այսինքն առարկայական գիտութիւն եւ ոչ ներքինի մասին, որ է ենթակայական գիտութիւն: Յաջող հոգեկան կեանքի մը համար մարդ պարտ է ինքզինք ձերբազատել արտաքին աշխարհէն եւ յարիլ դէպի իր ներքին աշխարհը: Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞ ըսած. «Երկու

տիրոջ չէ՞ք կրնար ծառայել», ինչպէս նաեւ «Ան որ ինձմէ աւելի կը սիրէ իր հայրը, մայրը, կիներ, ամուսինը ու զաւակը ինձի արժանի չէ»: Ձերբազատուիլ չի նշանակեր մարդկային՝ ընկերային եւ ընտանեկան առօրեայ պարտականութիւնները անտեսել: Ընդ հակառակը, զանոնք լաւագոյնս կատարել, բայց կապուած չըլլալ անոնց արդիւնքներուն եւ հպարտանալ, այլ զանոնք կատարել իբրեւ Աստուծմէ տրուած պարտականութիւններ: Ձերբազատուիլ անպէտ աշխարհիկ հետապնդումներէ, հաճոյքներէ ...: Բոլոր ասոնց առընթեր ամենակարեւոր ձերբազատումը մարդուն իր «Ես»-էն ձերբազատումն է: Շնորհալին լաւագոյնս ներկայացուցած է այս ձերբազատումը «Առաւօտ Լուսոյ» երգին մէջ. «Չար մշակողին, Չար սերմանց նորին, Չորացոյ զպտուղն» բառերով: Չարը մարդուն «Ես»-ն է: Միթէ Աւետարանին մէջ ալ չէ՞ գրուած «չարախօսը»: Երբ մարդ կը յարի եւ կը փարի իր «Ես»-ին, կը կատարէ միայն «Ես»-ին փափաքները: Այդ փափաքները «Ես»-ին մշակած՝ ցանած սերմերուն պտուղներն են: Միայն երբ անհատը կ'անտեսէ իր «Ես»-էն եկած բոլոր փափաքները, այդ պտուղներն ալ արդիւնաբեր չեն ըլլար՝ չորցած կ'ըլլան: Ահա՛, բուն ձերբազատումն ալ անտեսել է «Ես»-ը, ինչպէս Յիսուս ըրաւ անապատին մէջ եւ երկրորդ անգամ մըն ալ խաչին վրայ:

Երբ անհատը ճշմարիտ հաւատքով իր կեանքի դէկը կու տայ Քրիստոսի՝ իր ճշմարիտ էութեան, ամբողջովին ձերբազատուած ու անտեսած ըլլալով իր «Ես»-ը, ներհայեցողութեամբ կ'արժանանայ աւելի բարձր գիտակցութեան, որ իրեն կու տայ յաւելեալ գիտութիւն եւ Յիսուս Քրիստոսի սորվեցուցած թագուն գիտութիւններու մասին հասկացողութիւն: Այս հասկացողութիւնը զինք կը մղէ Աստուծապաշտու-

Թեան: Երբ մարդ կը կարողանայ ինքզինք ձերբազատել իր «Ես»-էն, ան նաեւ ինքզինք ձերբազատած կ'ըլլայ թէ՛ եսասիրութենէ, թէ՛ եօթ մահացու մեղքերէն, թէ՛ ալ իր անասնական բնոյթէն, որովհետեւ ասոնց բոլորն ալ կը ծագին «Ես-էն եւ կը պղծեն մարդը:

Այս գիրքին մէջ ներկայացուած Շնորհալիի չորս երգերն ալ Աստուածապաշտութեան բացառիկ օրինակներ են: Աստուծոյ Լոյսին մեր մէջ յայտնութեան երրորդ միջոցն ալ պաշտամունքն է: Ի՞նչ կը հասկնանք պաշտամունք կամ Աստուածապաշտութիւն ըսելով: Շատեր կը կարծեն թէ Աստուածապաշտութիւնը օրը երկու կամ երեք անգամ ծունկի գալ, երկու ձեռքերը միացնել եւ աղօթել է, կամ եկեղեցի երթալ եւ արարողութիւններուն ներկայ գտնուիլն է: Անտարակոյս ասոնք Աստուածապաշտութեան մաս կը կազմեն: Ճիշդ ասոր համար ալ եկեղեցական արարողութիւնները «պաշտամունք» կը կոչուին: Բայց ասոնք Աստուածապաշտութեան միայն առաջին մէկ-երկու քայլերն են: Մարդ չի կրնար պաշտել այն ինչ որ ինք չի սիրեր: Ան նաեւ չի կրնալ սիրել այն ինչ որ ինք չի ճանչնար: Ուրեմն Ո՞վ կամ ո՞ւր է Աստուած, որ գիտնանք թէ Ո՞վ պիտի սիրենք եւ Ո՞վ պիտի պաշտենք: Յաճախ կ'իմանանք, որ կ'ըսեն. «Աստուած ամենագէտ է, Աստուած ամենուրեք է, Աստուած ամենակարող է»: Կ'իմանանք եւ ամենայն անկեղծութեամբ ալ կը հաւատանք, բայց առանց հասկնալու անոնց ներկայացուցած ճշմարտութիւնները: Եթէ Աստուած ամենուրեք է, ընդհանուր ստեղծագործութիւնը պէտք է Աստուծոյ զանազան արտայայտութիւնները ըլլան: Իսկ եթէ Աստուած ամենագէտ է, հետեւաբար Իր գիտակցութիւնն է, որ կը գործէ բոլորիս մէջ: Միթէ Աւետարանին մէջ չէ՞ գրուած. «ձեր մարմինները Աստուծոյ տաճարներ են», դարձեալ «Չէ՞ք գիտեր թէ Աստուած ձեր մէջ կը բնակի», ինչպէս

նաեւ Քրիստոսի հետեւեալ խօսքերը. «Ես եմ աշխարհի Լոյսը»՝ լոյսին փոխաբերական իմաստը գիտակցութիւնն է, ինչպէս նաեւ. «Ես եմ Կեանքը»՝ ուրեմն եթէ կ'ապրինք եւ կեանք ունինք Քրիստոս մեր մէջ պէտք է ըլլայ, մեզի իր կեանքը եւ գիտակցութիւնը տուողը, հետեւաբար մեր ճշմարիտ էութիւնը պէտք է ըլլայ: Ուրեմն մարդ պէտք է Աստուած փնտռէ հոս ու հոն, Աստուած իր ճշմարիտ էութիւնն է: Ամէն մարդ իր կեանքը կը սիրէ եւ նոյնիսկ շատեր մեռնելէ կը վախնան: Դժբախտաբար շատեր փարած իրենց «Ես»-ին կը սիրեն իրենց «Ես»-ը: Ինչպէս վերեւ շեշտուած էր առանց «Ես»-էն ձեռքազատուելու Աստուածապաշտութիւնը կարելի չ'ըլլար: «Ես»-էն ծագած սէրը զգացական է, իսկ մեր ճշմարիտ էութենէն՝ մեր Հոգիէն՝ Քրիստոսէ ծագած սէրը Աստուածային է եւ «իրենինը» չի փնտռեր: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ Քրիստոսի զանազան արտայայտութիւններն են: Ուրեմն եթէ մարդ պիտի սիրէ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս, պէտք է՝ որ միանգամայն սիրէ ընդհանուր ստեղծագործութիւնը: Իսկ եթէ ան կը սիրէ ստեղծագործութիւնը, պէտք է որ իր սէրը ցոյց տալու համար պահէ, պաշտպանէ եւ խնամէ բոլորը՝ նիւթը, բոյսը, անասունը եւ բոլոր մարդիկը: Ահա՛ աս է ճշմարիտ Աստուածապաշտութիւնը, գործնականօրէն ցոյց տալ Աստուծոյ հանդէպ իր ունեցած սէրը: Ահա աս էր իմաստը Յիսուսի ըսածին. «սիրէ քու թշնամիդ»: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Քանի որ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի ըրիք»: Անօթի մը կերակրել, ծարաւ անձ մը յագեցնել, տխուրին հետ տխրիլ եւ անոր տխրութիւնը բաժնել, իսկ ուրախին հետ ալ ուրախանալ եւ անոր ուրախութիւնը բազմապատկել, բոլորը Քրիստոսի ընել է, հետեւաբար Զինք պաշտել: Որեւէ բանի չվնասել, կարեկից ըլլալ եւ միշտ

օգնող կը ներկայացնեն ճշմարիտ Աստուածապաշտութիւնը, որովհետեւ ան սիրել ու խնամել է Քրիստոսի զանազան երեւոյթները՝ արտայայտութիւնները: Անձ մը որ ճշմարիտ Աստուածապաշտութեան ճամբան բռնած է, այլեւս եսասէր չի կրնար ըլլալ: Իր վարուելակերպը, իր կենցաղը բոլորովին կը փոխուի եւ կ'ըլլայ ըստ իր էութեան՝ Քրիստոսի կամքին քան թէ՝ իր «Ես»-ին: Պէտք չէ մոռնալ թէ անձը ձերբազատուած պէտք է ըլլայ իր «Ես»-էն եւ իր անասնական բնոյթէն: Եւ ահա՛, Աստուծոյ Լոյսին մեր մէջ յայտնութեան չորրորդ միջոցն ալ մարդուն կենցաղը եւ արարքներն են:



ՅԱԲԵԼՈՒԱԾԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԵՕԹԸ ՈԳԻՆԵՐԸ

ԺԱ. ՄԱՍ

Աստուածաբանությունը այն գիտությունն է, որ կը հաստատե հիմերը աւելի լաւ հասկնալու համար Ստեղծիչը եւ անոր օրէնքները: Հասկնալու համար այն ուժը, որ Ան կ'օգտագործէ մարդոց տալու համար գերմարդկային կարողութիւններ, որ մարդը ծառայէ մարդուն եւ Արարիչին: Այս սերտողութիւնը փորձ մըն է պեղելու համար գերմարդկային Աշխարհը, ուր կը տիրէ Աստուծոյ օրէնքը իր եօթը ուժերով:

Որո՞նք են այն եօթը ոգիները, որոնցմով Աստուած ցոյց կու տայ իր հզօրութիւնը: Տիրոջ ոգին, իմաստութեան ոգին, հասկացողութեան ոգին, խորհուրդի ոգին, զօրութեան ոգին, գիտելիքի ոգին եւ աստուածավախութեան ոգին:

Երկրորդ ոգին իմաստութեան ոգին է: Հին Կտակարանին մէջ Եսայի մարգարէ կ'ըսէ. «Ան պիտի ունենայ Տիրոջ ոգին, իմաստութեան ոգին... Չայն պիտի դարձնէ արագ ընկալող աստուածավախութեան: Ան պիտի չդատէ տեսելով, ոչ ալ լսելով...» (Եսայի 11:2-3):

Շատ անգամ կը մոռնանք, որ քրիստոնէայ ենք, հետեւորդները եկեղեցիի մը, որ կ'ուսուցանէ ներել ուրիշը: Դժբախտաբար չներելու սովորութիւնը արմատ նետած է մեզմէ շատերու միտքին ու հոգիին մէջ: Այս սովորութիւնը մարդը կը դարձնէ կարծր, չներող էութիւն մը, երբեմն կ'առաջնորդէ հոգեկան ախտերու: Այս սովորութիւնը հակառակն է քրիստոնէութեան հաւատոյ հանգանակին: Իմաստութիւնը ներելու առաքինութիւնն է: Իմաստուն մարդը գիտէ ներել եւ աւելի կը զօրանայ ներելով, կը բարձրանայ Տիրոջ եւ մարդոց առջեւ: Յիշենք «Հայր Մեր» աղօթքին հետեւեալ խօսքերը՝ «Եւ թող մեզ զպարտիս մեր որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»: Այսինքն «ներէ մեր մեղքերը ինչպէս որ մենք կը ներենք ուրիշին մեղքերը»:

(Շարունակելի)

«The Seven Spirits of God», Chris Oyakhilome, Love
World Publications

ՏԷՐ ՀՈՎՈՒԵԱՅԷ ՁԻԱ, ԵՒ ԻՆՁ ԻՆՁ ՈՉ ՊԱԿԱՍԵԱՅԷ:



**ԹԷՊԷՏ ԵՒ ԳԱԱԾԻԾ ԵՍ Ի ՄԷՁ
ԱՏՈՒԵՐԱԾ ՄԱՀՈՒ, ՈՉ ԵՐԿԵԱՅԻ
Ի ՉԱՐԷ ՁԻ ԴՈՒ ՏԷՐ ԸՆԴ ԻԱ ԵԱ:**

